16415

1901

361
F-91

2010

361
Բ-91

ԲԺ. Ա. ԲԱԼԴԱԼԵԱՆ.

ԱՐԻՔ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան եղբ. Յ. Ս. Ասլեանների
1901.

00
36-ԲԱԼ

361
Բ-91
300 ամ
1186-ԲՕՒ
15270

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ.

Համ. Ա. Արաքելեան
Հ. Ա. Արաքելեան.
Амбарцумъ А. Аракелянъ

Կարիք եւ բարեգործութիւն.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1003
71542

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան եղբ. Ց. եւ Ս. Աւագեանների.
1901.

7032

Дозволено цензурою С.-Петербургъ, 6-го Октября 1900 года.

2002

Աղքատութիւնը պէտք ունի ոչ թէ օգնութեան, այլ աշխատանքի. նրա դէմ կարելի է կռուել՝ երբ աշխատանքը կանոնաւոր կազմակերպութիւն ստանայ։

Մուրացկանութիւնն օգնութեան կարիք ունի. նրա դէմ կարելի է մաքառել հասարակական խնամարկու. հոգաբարձութիւն հաստատելով։

Վերջապէս մուրացկանութեան դէմ կարելի է կռուել՝ արհեստով մուրացկաններին աշխատանք սովորեցնելով. ապա ուրեմն անհրաժեշտ է ստիպողական աշխատանքի համար նոր աշխատանոցներ հիմնել։

Սէր դէպի մարդկութիւնն արտայայտվում է, երբ ձգտում ենք մարդուն մտածող ու հասարակութեան օգտակար անդամ դարձնել, ջանք ենք գործ դնում ճնշող պայմաններից նրան ազատել, կամ թէ գոնէ միջոց ենք տալիս, որ նա իւր ջանքով դուրս գայ յանցաւորութեան ճանապարհից։

Այս տեսակ մարդասիրութիւնն արժանի է իսկապէս մարդասիրութիւն կոչուելու, որ չքաւորին յարգում է եւ. ոչ թէ խղճում, որ այն համոզմունքն ունի, թէ չքաւորն էլ ապրելու. իրաւունք ունի միւս մարդկանց նման, եւ. հասարակութիւնը կամ մասնաւոր անհատը ներկայումս հիմնաւոր ու խելացի ծախքեր անելով՝ ապագային պատրաստում է օգտակար ու գործունեայ աշխատաւորներ։

Որքեր, ծերեր, կամ անկեալներ խնամելը հասարակական խնամատար հոգաբարձութեան մասնաւոր հոգսն է լինելու. եւ. ոչ թէ բուն նպատակը։

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ.

Ազատությունը մի այնպիսի խոց է, որ մարդուս կազմուածքը ուտում-լափում է:

Այն պատճառների մէջ՝ որոնք հակառակ մարդկանց կամքին՝ համարեա միշտ թարմ են պահպանում այդ խոցը, մեծ տեղ են բռնում տնտեսական մրցութեան օրէնքները, այն անխուսափելի ճակատագրական օրէնքները, որոնց հետ անհրաժեշտ է անընդհատ կռուել:

Արդիւնագործութեան կռիւը՝ արդիւնագործութեան դէմ, մի որ եւէ ազգինը—մի ուրիշի դէմ, անհատի մաքառումը անհատի դէմ՝ կարող չէ առանց տանջանքների անցնել. նոյն իսկ յառաջադիմութիւնը տանջանքների ու կռուի արդիւնք է—շատ անգամ անգութ, յուսահատ կռուի անբարեյաջող հանգամանքների դէմ:

Բարեգործութիւնը կարող է փոքր ի շատէ թեթեւացնել այդ տառապանքները:

Ազատությունն առաջ է գալիս եւ ուրիշ պատճառներից, որոնք աւելի եւս կախու�ունին մարդուս ազատ բնաւորութիւնից ու կամքից:

Եթէ իրանց ձեռքի աշխատանքով ապրող մարդիկ անհոգ, շռայլ ծոյլ ու անառակ չլինէին, նոցա հասարակական դրութիւնը զգալի կերպով լաւ կը լինէր:

Բայց որովհետեւ աղքատ լինել չի նշանակում բոլորովին կատարեալ լինել, այդ պատճառով էլ այն ախտերն, որոնք հաւասարապէս ընդհանուր են բոլոր մարդկանց, թէ հարուստներին եւ թէ աղքատներին, պահպանում են ազատությունն ամբոխի մէջ. իսկ ազատությունն էլ իւր հերթին առաջ է բերում նոր նոր ախտեր:

Այսպէս առաջ է գալիս աղքատութեան դէմ դեղ որոնելու ձգտումն, որ պէտք է օգնէ նորա բազմակերպ տեսակներին, մի այնպիսի դեղ՝ որ կարելի լինի դնել մեր հասարակութեան այդ արիւնոտ վէրքի վերայ:

Շատ հեշտ է նկարագրել այդ վէրքը, բայց աւելի դժուար է դեղերի վերաբերմամբ համաձայնութեան գալ:

Դեռ հին ժամանակներից շատ է գրուել մարդկանց դժբախտութիւնների մասին, որոնց պատճառն այն չէ եղած միայն, որ մարդիկ հիւանդութիւնների ու մահուան են ենթարկուած:

Այդ դժբախտութեան պատճառն այն ծանր կռիւը է, որ մարդս ստիպուած է մղել դաժան բնութեան դէմ, որ ակամայ սնունդ է մատակարարում նրան:

Այստեղ՝ ինչպէս եւ ամէն տեղ, տռաջ է գալիս գոյութեան սարսափելի կռիւը, եւ յաղթութիւնը միայն հզօրն է տանում, իսկ տկարն ընկնում ոչնչանում է:

Քրիստոնեայի համար աշխարհքը մշտական տանջանքի մի վայր է, եւ կեանքը՝ փորձութեան ժամանակ, թէեւ լոյսը փայլում է այն մռայլ ճանապարհի ծայրին, որի վերայ թափառում է այդ վաղանցուկ ճանապարհորդը—«մարդը», բայց եւ այնպէս նորա իւրաքանչիւր քայլն արիւնով է ողողուած:

Այսպէս ուրեմն տանջանքներն անքակ կերպով կապուած են մարդկային կեանքի պայմանների հետ՝ եւ ոչ միայն բարոյական տանջանքները, այլ եւ ֆիզիքականը. ոչ միայն հիւանդութիւնն ու մահը, այլ եւ լարուած աշխատութեան անվերջ ու տաժանական լինել:

Կան շատ օգտակար հիմնարկութիւններ, որոնց միջոցով չքաւորութիւնից ազատուել կարող են այն մարդիկը, որոնց համար չքաւորութիւնը սովորական երեւոյթ է:

Եթէ այդ չյաջողուի, այն ժամանակ կան եւ այլ բազմաթիւ միջոցներ, որոնք նոյնպէս կարող են չքաւորութեան դառնութիւնները մեղմել. միջոցները հետզհետէ կարող են կատարելագործուել, եւ կամ նորերը հնարուել:

Հասարակական խնամատարութեան աւելի հաստատուն կազմակերպութիւնն ու անհատական (մասնաւոր) բարեգործութեան աւելի յարատեւ ու խելացի ջանքերը՝ կրկարողանային թեթեւացնել շատ տանջանքներ, եւ մեծ մասամբ առաջն առնել չքաւորութեան այն սարսափելի դրամաներին, որոնք ժամանակ-ժամանակ շատ տխուր լոյս են սփռում մեր հասարակութեան ստորին խաւերի վերայ:

Ամենայն հաստատութեամբ կարելի է ասել, թէ նոյն իսկ մի բաժակ ջուր՝ որ ծարաւից տանջուողին տալիս ենք, զուր չենք տալիս, եւ որ մարդկային գործունէութեան համար սրանից աւելի ազնիւ խնդիր կարող չէ լինել:

Բաւական է, որ մի անգամ ուշադրութեամբ կեանքը դիտենք, որպէս զի սարսենք մարդկային բազմատեսակ տանջանքներից. նոքա ամէն տեղ են, եւ նոյն իսկ ամէն մի փողոցի, ամէն մի տան մէջ:

Ով որ փորձել է թափանցել մեզ մօտիկ, մեզ շրջապատող՝ այսպէս ասած, վշտի մէջ, այնպիսին գիտէ, թէ ո՞րքան աննշան են այն ոյժերն ու միջոցները՝ զրկանքների ու տառապանքների համեմատութեամբ, որոնցով տանջվում է համբերատար խեղճութիւնը՝ «յանցաւորութեան» պատճառներից ամենամեծը:

Մարդկային տանջանքների օր աւուր ծաւալումտեսնելով եւ հասկանալով, թէ ինչպէս անկարող է որ եւէ անհատ քիչ թէ շատ կանոնաւոր կերպով բազմաթիւ մարդկանց ադքատութեան օգնել, բնականաբար կարիք կը զգացուի ոչ միայն հասարակական, այլ եւ անհատական բարեգործութեան եղանակը

կազմակերպել, եւ այն էլ՝ կարելի եղածին չափ լայն հիմունքներով:

Ամէն մի հասարակութիւն՝ հասնելով քաղաքակրթութեան որոշ աստիճանի, անհրաժեշտ է համարում հէնց իւր համար, այսինքն՝ իւր մարդասիրական զգացման գոհացումն տալու, եւ իւր նուիրական նպատակներն իրականացնելու համար՝ ձեռք առնել միջոցներ, որպէս զի ոչ ոք՝ չնայելով իւր ծանր վիճակին, չկորչի գոյութիւն պահպանելու ամենակարեւոր միջոցների պակասութիւնից:

Այսուհետեւ ամեն մի մարդ թող իմանայ, թէ օգնել պէտք է մի միայն աշխատողին, որ ժամանակաւորապէս կամ ընդ միշտ զրկուել է աշխատելու կարողութիւնից:

Այս միջոցով կարելի է արմատախիլ անել մարդկային հասարակութեան միջից սարսափելի ցեցը, որ ոչնչացնում է աղքատներին:

«Ով է յանցաւոր» գրքուկի մէջ քիչ թէ շատ բացատրել ենք յանցանքի պատճառներն ու հետեւանքները. իսկ այստեղ կը բացատրենք յանցանքի ամենագլխաւոր պատճառը եւ այն միջոցները, որոնցով արմատախիլ կարելի է անել. կը խօսենք նոյնպէս հասարակութեան պարտականութիւնների մասին, որ պէտք է կատարէ, եթէ ուզում է իսկական քաղաքակրթութեան հետ ձեռք ձեռքի տուած ընթանալ:

Ոչ մի կոպէկ, աննպատակ կերպով մեզ դիմողներին չպէտք է տանք:

Միայն այդ պայմանով կարելի է խնայել կոպէկները, որոնց հաւաքածուն կարող է միլլիոններ տալ, որոնցով կարելի կը լինի իսկապէս աղքատներին եւ դժբախտներին հասցնել իրական օգնութիւն, որին նոքա արժանի են:

Բժ. Ա. Բուդուղեան.

Ս. Պետերբուրգ
1900.

Ա.

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ.

Ամէն մի հասարակութեան մէջ կայ մի դասակարգ, որ ոչ մի եկամուտ չունի՝ ո՛չ դրամագլխից, եւ ո՛չ էլ աշխատանքից:

Այդ դասակարգը կազմում է խեղճերի ու չքաւորների խուրը. խեղճութիւն ասելով պէտք է հասկանալ ապրելու միջոցների նուազութիւն, իսկ չքաւորութիւն ասելով՝ նոյն միջոցների անպայման չգոյութիւն:

Աղքատութիւնը յարաբերական գաղափար է, եւ հասկանալի է դառնում «հարստութիւն» գաղափարով. օրական ապրուստը հայթայթելու համար բաւարար միջոցներ չունեցող անհատն աղքատ է այն մարդկանց համեմատութեամբ, որոնք իրանց պահանջներին համապատասխան բաւարար միջոցներ ունին. հասարակութեան բոլոր խաւերի մէջ համեմատաբար կարող են աւելի աղքատներ լինել քան թէ հարուստները:

Բայց եթէ մէկը բաւական միջոցներ չունի իւր ամենակարեւոր մարդկային պահանջներին գոհացում տալու համար, եւ եթէ չի կարող ձեռք բերել այդ միջոցները, այն ժամանակ առաջ է գալիս «չքաւորութիւն». խեղճութիւնն ու չքաւորութիւնը յայտնի էր թէ՛ հին ,թէ՛ միջին եւ թէ՛ նոր ժամանակներին:

Առ հասարակ մի քանիսը ցոյց են տալիս, որ հարուստներն աւելի հարստանում են, իսկ աղքատներն աւելի ու աւելի աղքատանում, իսկ միւսները հակառակն են պնդում:

Պաշտօնական վիճակագրութեան համաձայն Անգլիայում 1850 թ. օգնութիւն ստացողների թիւը կազմում էր ամբողջ ազգաբնակութեան հինգ եւ մի քառորդ միլիոնը· իսկ 1892 թ. երկու եւ կէս տոկոս էր միայն:

Այսպիսով քառասուն տարուայ ընթացքում ընկերութիւններից օգնութիւն ստացողների տոկոսը համարեա՛ կիսով չափ պակասել է:

Կարդալով հէնց թէկուզ մեր պարբերական թերթերը՝ մարդ ուղղակի սարսափում է. անթիւ խեղճեր ու չքաւորներ կան ամեն տեղ թէ քաղաքներում եւ թէ գիւղերում. կամ թէ լցուած են բանդերում, քչքւորների ապաստանարաններում:

Չքաւորների բանակը կազմուած է ամէն սեռի եւ հասակի մարդկանցից՝ չքաւորութիւնը չի խնայում դեռափթիթ մանուկներին եւ ոչ էլ զառամեալ ծերունիներին:

Նորա ամենակարող օգնականները՝ քաղցը, ցուրտը ու անտէրութիւնը, չեն վախենում ոչ աքսորից եւ ոչ էլ բանդարկութիւնից:

Ցանցանքի հետ սերտ կապուած՝ իբրեւ միեւնոյն մօր—աղքատութեան—զաւակներ, այդ բանակը ստեղծում է գողեր ու յափշտակիչներ, որոնք գաղտնի ու յայտնապէս վնասելու փորձեր են անում ոչ միայն իրանցից աւելի երջանիկի ստացուածքի, այլ եւ նորա կեանքի դէմ:

Մեր աչքով տեսնում ենք, թէ ինչպէս չքաւոր մարդը, որի յանցանքն աղքատութեան ու անզօրութեան մէջ է միայն, եղեռնագործ է դառնում, եւ հասարակութեան վտանգաւոր թշնամի:

Ահա այս է առանց թուանշանների էլ լաւ յայտնի չարիքի էութիւնը, այս է այն սարսափելի խոցը, որ չնայելով իւր սպանիչ—վարակող ոյժին՝ համարեա մինչեւ այժմ մնացել է առանց բժշկութեան:

Այո, առանց բժշկութեան:

Իսկ այդ ցաւը բոլորովին բուժելու, որը այսպիսի խոցեր է առաջ բերում, եւ կատարելապէս արմատախիլ անելու մասին աւելորդ է մինչեւ անգամ մտածել:

Մեր նպատակը պէտք է լինի այդ չարիքը կարելին չափ պակասացնել, բնաջինջ անել այն ամէնը, ինչ սր քիչ թէ շատ արհեստական կերպով ստեղծում ու պահպանում է՝նրան, եւ մենք պէտք է ոչնչացնենք այն բոլորը, ինչ որ կարելի է ոչնչացնել:

Այս անել ոչ միայն մեր պարտքն է, մեր պարտաւորութիւնն է, այլ եւ տէրութեան ու հասարակութեան համար ամենակարեւոր խնդիր. պէտք չէ դանդաղել այդ սարսափելի չարիքի հետ կռուելու համար, կարելի չէ չմտածել այդ կռուի մասին, այդ բանի համար կարելի չէ չօգտուել այն ամէն միջոցներով, որոնք նպատակայարմար ու իրական են:

Չքաւորութեան դէմ ապարդիւն կերպով կռուած կը լինինք, եթէ մէջ տեղից չը վերցնենք այն պատճառները, որոնք չքաւորութիւն են առաջ բերում եւ միեւնոյն ժամանակ բազմացնում:

Այդպիսի վէրքի դէմ՝ որպիսին է չքաւորութիւնը, լուրջ կերպով կռուելու համար՝ կարելի չէ միմիայն սահմանափակ բժշկութեամբ գոհ մնալ. այդպիսի բժշկութեան արգասիքն այն միայն կըլինի, որ վէրքը մի տեղ ծածուկ կը մնայ, եւ նորա կողքին դարձեալ միւսը կը բացուի. կարեւոր է, որ բոլորովին չը բացուի. . .

Պարզ է ուրեմն, որ մեր ունեցած մաքառման միջոցները պէտք է ուղղենք միաժամանակ այն բոլոր

պատճառների դէմ, որոնք ստեղծում ու պահպանում են չքաւորութիւնը:

Գործադրուող այս եւ այն միջոցներից ինքն ըստ ինքեան կարող են չքաւորութիւնից խլել բազմաթիւ զոհեր, բայց այդ միջոցներն անկարող են, արգելել, որ նոր չքաւորներ չաւելանան, անկարող են որովհետեւ այն պատճառներն, որոնք ստեղծում ու պահպանում են չքաւորութիւնը, եթէ ոչ բոլորը՝ գոնէ համարեա բոլորը մնում են հզօր, եւ հետեւաբար անարգել կարող են իրանց սպանիչ դերը խաղալ:

Այդ դժուարութեան խնդիրը կարելի է լուծել չքաւորութեան բոլոր պատճառները միաժամանակ արմատախիլ անելով:

Նախ տեսնենք թէ որոնք են այն սարսափելի թշնամիները, որ աղքատին ստիպում են փրկութիւն գտնելու համար ձեռք կարկառել:

Այդ պատճառների մէջ առաջին տեղը բռնում է ամենազօրեղ եւ միեւնոյն ժամանակ երբեք չխնայող թշնամին—հարբեցողութիւը. . .

Դա չքաւորութեան այն ամենակարող գործօնն է, որին չեն կարող խռովել դէպի խեղճերին օգնելու համար գործ դրուած հնարները, նրանց դրութիւնը բարւոքելու համար եղած միջոցները:

Մենք կարծես լսում ենք Նրա դժոխային յաղթական ձայնը. «ինչ ուզում էք արէք ժողովրդի բարօրութեան համար տուէք գիւղացիներին, քաղաքացիներին մեծ մեծ հողեր, գործիքներ, փող. այդ բոլորը կոչնչանայ իմ խորտակիչ ուժի առաջ. մասամբ իմ շնորհիւ է, որ վեներական հիւանդութիւններն ու սիֆիլիսը տարածվում են, որոնց հետեւանքն են լինում վիժում, ազգերի մահ կամ այլասերում:

«Խմում են» թէ մեծերը, եւ թէ մանուկները, աւելի գինի քան թէ օղի. ծնողներն ուրախանում են, որ իրանց որդիքը կոնծում են մեծ մեծ բաժակնե-

ով գինի, եւ այդ՝ ծանօթների եւ հիւրերի առաջ պարծենալու մի առիթ է:

Բարեբախտաբար հարբեցողութիւնը կանանց մէջ շատ տարածուած չէ:

Եթէ կանայք էլ հարբեցողութեան տային իրանց, այն ժամանակ մուրացկանութիւնից ու բանդից ազատուել անհնարին կը լինէր:

Գինետունն ամէն բան կուլ է տալիս ե՛ւ տաւարը, ե՛ւ խրճիթը, ե՛ւ հանդերձեղէն. նա ուտում լափում է մարդուս առողջութիւնն ու սէրը եւ նոյն իսկ աշխատելու ընդունակութիւնը:

Այդ ճանապարհով առաջ է գալիս անուղղայ, հարբեցող մուրացկան, կամ եղեռնագործ գիւղացի՝ աշխատաւոր, հարկատու գիւղացու, լաւ քաղաքացու, հօր ու ընտիր ամուսնու փոխանակ:

Ռուսաց Սինոդի պրոկուրորի 1892 թ. հաշուից երեւում է, որ Ռուսաստանի մի քանի նահանգներում մի եկեղեցու հանդէպ չորս գինետուն է գալիս, մի ուսումնարանի դիմաց—վեց գինետուն. . .

Ուսումնարաններ ամէն տեղ չկան եւ այն էլ չորս-հինգ ամիս փակ են լինում, իսկ գինետուն ամէն-տեղ կայ, բաց է միշտ թէ տօն եւ թէ հասարակ օրերը, գիշեր ու ցերեկ, մի խօսքով ամբողջ տարին. . .

'Ի հարկէ զարմանալի չէ, որ մենք ամէն մի քայլափոխում տեսնում ենք գինետան եւ այլ ախտերի զոհեր:

Ո՞ւր են մեր բարեկարգ ուսումնարանները, որ կրթէին երեխայի սիրտն ու միտքը, որտեղ իրապէս լուսաւորուէր հայրենիքի իսկական աշխատաւորը. . .

Միւս անյաղթելի ուժը՝ որ քիչ-քիչ ժողովրդի մեծ մասին գլորում է ախտերի ու մուրացկանութեան անդունդը՝ սակաւահողութիւնը, կամ աւելի ճիշտ անհողութիւնն է:

Տեղ տեղ մեր գիւղացիների մի մասը, այսինքն՝

գիւղական բնակչութեան աճող մասը՝ որ կազմուել է հողի բաժանման ժամանակից յետոյ՝ բոլորովին առանց հողի է, իսկ մնացածները սակաւահող գիւղացիներ են:

Այս մի փաստ է, որի մասին կասկած կարող չէ լինել:

Մինչեւ իսկ երբեմն խօսք է լինում գաղթեցնելու մասին, ապա ուրեմն մնաս բարեւ պէտք է ասել մեր կեանքին, աւանդութիւնների ու հնութիւնների. . .

Մեր կրեսոսների մեծ մասը՝ որ գիւղացիներից ու հասարակ դասակարգից են առաջ եկել, բոլորովին մոռանում են իրենց մտերիմ կրտսեր եղբօր, որ իւր հիւթալից կեանքով՝ դարուս համապատասխան լայն ու ճշմարիտ լուսաւորութեան շնորհիւ՝ կարող է օգտակար դառնալ թէ տէրութեան, թէ իւր հայրենիքին, եւ թէ ծննդավայրին. . .

Միայն հողը կարող է պահպանել մեր գոյութիւնը. . .

Մեր գործիչների մեծ մասը գիւղացու զաւակ է, մայր բնութեան ծնունդ:

Գաղթե՞լ:

Բայց չխօսելով այն բանի մասին, թէ ինչ ասել է այդ խօսքը գիւղացու համար, թէ ինչ սարսափելի հոգեկան կռիւ է առաջ բերում նրա եւ իւր ընտանիքի մէջ՝ ընդ միշտ հայրենի օճաղը թողնելու, թանկագին գերեզմանները թողնելու վճիռը, տառապալից, սակաւահող գիւղացուն, որ վաճառելու ոչինչ չունի, մեծ մասամբ այդ էլ չի յաջողվում:

Ո՞ւր եւ ինչպէ՞ս գաղթել:

Ահա մի խնդիր, որ մոռացնել պէտք է տայ նրան գաղթելու միտքը:

Եւ մեծ բախտաւորութիւն ու բարիք է, եթէ այդ միտքը մոռացուի, եթէ նա՝ հակառակ ակնյայտնի

անկարողութեան, ընտանիքով ճանապարհ չէ ընկել, չէ գնացել, չէ հաւաքել տնեցոց աստանդական կեանք վարելու համար, որովհետեւ աղքատ է, եւ այդ է նրան փրկում է:

Բանո՞ւոր դառնալ:

Հապա եթէ իւր հայրենիքում այնքան բանուոր կայ, որ կարիք էլ չի զգացվում իւր ձեռքին: Հապա եթէ հարեւան տեղերումն էլ այդ բանուորութիւնը, որ ստրուկ է դարձնում, ոչ մի միջոց չի տալիս ընտանիքը կերակրելու համար:

Իսկ օրական աշխատա՞նքը:

Բայց եւ այնպէս այդ էլ գիւղում ապահովուած է միայն խոտահունձի ժամանակ. նա կարող է նոյնպէս գործ գտնելու յոյս ունենալ միայն հերկելու, տափանելու եւ հնձի ժամանակ, իսկ տարուայ միւս եօթ-ութ ամիսնե՞րը:

Ահա տեսնում ենք, թէ ի՛նչպէս մեր անհոգ հողագործը գիւղերից քաղաքներ է դիմում «Քրիստոսի անունով» ողորմութիւն խնդրելու, կամ այն շուկաները կանգնելու, ուր ուժեղ ձեռների ու քաջառողջ մարդկանց պահանջ կայ:

Եւ քանի հողագործը կանգնում է այդ հրապարակներում, փորձում է իւր բախտը, «այդ փորձութեան» ժամանակ էլ նա մի օր կուշտ է լինում, մի օր քաղցած, եւ այսպէս քիչ-քիչ կա՛մ մուրացկան է դառնում եւ կամ բանդն է ընկնում:

Նոցանից ոմանք հաշմանդամ են դառնում, օրինակ Բաքուի նաւթահանքերում, որտեղ առողջ մարդը՝ երկու-երեք տարի աշխատելուց յետոյ՝ ուժասպառ է լինում եւ անպէտք:

Ոմանք էլ ստանում են ծանր հիւանդութիւններ, օրինակ՝ սիֆիլիս, ոսկրացաւ ե այլն:

Եւ փնտանում է օգտակար գիւղականը ունայն տեղը. . .

եւ այսպէս առանց գութանի հողագործը գալիս է քաղաք՝ պատուաւոր աշխատանք, ազնիւ գործ գտնելու համար:

Նա գալիս է այնտեղ, ուր ոչ միայն օրերով, շաբաթներով, այլ եւ ամիսներով աշխատանք են որոնում զանազան արհեստաւորներ եւ այլ եւ այլ վիճակի տէր մարդիկ:

Այսպէս ուրեմն մենք գտնվում ենք մեծ չափերով մուրացկաններ արտադրող ուժի, աշխատանքի սակաւութեան առաջ. . .

Դա իսկապէս մի սարսափելի ոյժ է, որը բացի յանցաւորներ եւ մուրացկաններ ստեղծելուց՝ մեծ մասամբ մարդկանց ապականում է, ջնջում է նոցա մէջ հաւատ դէպի մարդը, սէր դէպի մարդը:

Որչափ որ երկար է կռվում դժբախտը այդ ուժի դէմ, եւ որքան որ յամառ ու խիստ է աշխատանքի որոնումը, այնքան էլ նա դառնում է խստաբարոյ, եւ այնքան էլ ատելի են դառնում նրան ապահով եւ կուշտ մարդիկ:

Եւ ի՞նչպէս չկատաղի ու չչարանայ:

Նայեցէք այդ կռուից ու քաղցից տառապած դէմքերին, որոնք առանց յուսահատուելու աշխատանք են աղերսում. որոնք ամէն օր յոյս ունին, թէ կարող են իրանց ձեռներն ու ուժը գնահատող գտնել, եւ այդ ճանապարհով մի կտոր հաց վաստակել, նայեցէք նրանց, լսեցէք նրանց խօսքերը, եւ տուք կը սոսկաք ձեր տեսածից ու լսածից:

Մեծ մասամբ անլուայ, կեղտոտ, պատառոտուած շորերով, պղտոր աչքերով ու յուսահատ դէմքերով, ո՞ւր են գնում նոքա, ինչի՞ են ծարաւի եւ ի՞նչ է նոցա մտածմունքը:

Ամէնքն էլ ուզում են մի կտոր հաց, եւ միայն այդ են ցանկանում եւ միայն դրա մասին են մտածում:

Բացի ծերերից, պառաւներից, պատանիներից

Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A Публичная Библиотека
7/XI-1922

եւ հիւանդներից, որոնք գնում են «բարի մարդիկ» փնտռելու, բացի նոցանից՝ որոնք հրապարակներում իզուր բախտ փորձելուց յետոյ՝ ստիպվում են ապաստան գտնել եկեղեցու դռների մօտ կամ փողոցներում, եւ բացի նոցանից՝ որոնք արդէն ծանօթ են եւ բախտ չեն փորձում, այլ դիմում են ուղղակի մուրացկանութեան, մնացածները գնում են հրապարակ եւ սպասում, որ իրանց աշխատելու ուժը գնողներ գտնուին:

Այդտեղ շատ կան մանաւանդ առանց գութանի երկրագործներ, այս կամ այն կերպ աղքատացած քաղաքացիներ, արհեստաւորներ եւ այլն:

Մեծ մասամբ սոքա բոլորը չեն ուզում մուրացկանութիւն անել կամ գողանալ, այլ ուզում են աշխատել, եւ թէկուզ տաժանակիր աշխատանքով վաստակել տան եւ օրուայ հացի գին:

Լինում են օրեր, երբ ամենաուժեղ ու ջղուտ մարդու բազուկներն էլ պահանջող չի լինում:

Ի՞նչ անեն, ինչո՞վ լցնեն իրենց ստամոքսը, ինչո՞վ գէթ մի քիչ հանդարտացնեն քաղցածութեան տանջող զգացումը:

Եւ ոչ միայն փոքրոգի, ծեր եւ անպէտք աղքատը, այլ շատ անգամ նոյն իսկ երիտասարդ, ուժեղ, աշխատելու ընդունակ մարդը ստիպուած է լինում ընտրել երկուսից մէկը՝ կա՛մ յանցաւորութիւն եւ կամ մուրացկանութիւն:

Ուրիշ ելք չկայ:

Աղքատներից մի քանիսը յանցաւորութիւնն են ընտրում, որ յաջողութեան դէպքում կերակրում է նոցա. յաջողուեց՝ նա ինքը կը գտնէ իւր համար հաց ու տուն, չյաջողուեց՝ կը բռնուի, եւ նորան կը տան թէ՛ կերակուր եւ թէ ապաստանարան:

Իսկ մուրացկանի պէս ձեռք կարկառող փոքրամասնութիւնն ու առողջ մարդիկ՝ իզուր ամբողջ օրը

71542

անց են կացնում փողոցներում աղերսելով:

Նորա խնդիրքն ու համոզեցուցիչ փաստերն արհամարում են, եւ նրան յանդիմանում են, որ չի ուզում աշխատել, նախատում՝ որ առողջ լինելով չի ամաչում ողորմութիւն խնդրել եւ այլն:

Եւ լաւ է եթէ այդ բոլորն արհամարհելով՝ յամառութեամբ ձեռք է կարկառում իւր դրացու սրրտին եւ ո՛չ թէ նորա կողպէքին կամ արկղին, եւ ոչ էլ վերջապէս իւր մերձաւորի կոկորդին. . .

Իսկ ի՞նչ է աղքատի դրութիւնը ձմեռը, տարուայ այն ժամանակը, երբ աշխատանքի պակասութիւնն աւելի զգալի է թէ՝ գիւղերում եւ թէ քաղաքներում:

Նա եւ նրա կիսամերկ ընտանիքն ի՞նչպէս պէտք է կռուին ոչ միայն քաղցի, այլ եւ ցրտի դէմ:

Գիւղացին հող չունի, նշանակում է չունի նոյնպէս հաց ու վառելիք:

Քաղաքացի չունեւորը աշխատանք չունի. նոյնպէս եւ գրաւ դնելու եւ ծախելու բան, նշանակում է հաց նոյնպէս չունի, ո՛չ էլ վառելիք:

Ցուրտ է, սաստիկ ցուրտ է գիւղական խրճիթում ու քաղաքային ներքնայարկեր. բայց աւելի եւս անտանելի է ցնցոտիներ հագած մարդու դրութիւնը փողոցում:

Այստեղ նոյն իսկ մուրացկանութիւնը հերոսութիւն է, որին ամէն աղքատ ընդունակ չէ:

Եւ ահա տեսնում ենք, թէ ի՞նչպէս մի կողմից ձմեռ ժամանակ յանցաւորներով բանդերն են լցվում, ի՞նչպէս սեպհականութեան դէմ գործուած յանցանքների թիւն աւելանում է, եւ թէ ի՞նչպէս ամէն տեսակ արհեստի ու դրութեան տէր աղքատ մուրացկան մեռնում է տիֆից (ապաքէն հարուստներն էլ նրանցից են վարակվում) եւ ճանապարհին սառչում. վեր-

ջապէս տեսնում ենք, թէ ի՛նչպէս բոլորովին թուլացած երկար ու ապարդիւն կռուից՝ թունաւորվում է, կախվում, խեղդվում է եւ այլն եւ այլն. . .

Մեծ է, այժմս էլ շատ մեծ է այդ զոհերի թիւը, եւ դրա ապագան էլ աւելի սարսափելի է թվում:

Բայց աշխատանքի սակաւութեան հետ՝ գիւղացու վերայ ծանրանում է էլի մի բան, որ փոքր առ փոքր նրան բոլորովին սնանկացնում է, նոյն իսկ աշխատանքի կատարեալ առատութեան ժամանակ:

Այդ՝ ձմեռուայ դատարկ կեանքն է, տնայնագործութեան ու արհեստների բացակայութեան պատճառով, տօների շատութիւնը, հարսանեկան քէֆերը 3—4 օրերով եւ այլն:

Թէ ո՛րքան ժամանակ ի զուր է կորչում, ասելն իսկ սարսափելի է: Եւ ոչ մի կողմից բողոքի ձայն չի լսվում այդպիսի հակատնտեսական կործանիչ ուժի դէմ. . . դատարկապորտութեան դէմ:

Հապա վաշխառութի՞ւնը. . .

Ի հարկէ՝ շատ մարդոց է մուրացկանութեան ուղարկում եւ այն տխուր երեւոյթը, որ յայտնի է վաշխառութիւն անունով:

Վաշխառութիւնը երեւան է գալիս այնտեղ, ուր խաւար է տիրում, ուր չկան լաւ ուսումնարաններ եւ չկայ լուսաւորութիւն:

Վաշխառութիւնը՝ վերեւում յիշուած մուրացկանութեան միւս պատճառների հետ՝ լրացնում է գիւղացու դժբախտութեան չափը, կամ այսպէս ասենք վերջնականապէս տկարացնում է նրան:

Կարիքի ժամանակ բոպէական օգնութեան պատրուակով վաշխառուն ծծում է գիւղացու բովանդակ հիւթը, ստիպելով կրկնապատիկ վերադարձնել տուած ամէն մի փշրանքի փոխարէնը:

Լինելով համարեա ամէն տեղ ե՛ւ գինեվաճառ,

եւ խանութպան՝ վաշխառուն ամէն կողմից կողոպտում է գիւղացուն. կողոպտում է, մինչեւ որ նորա ուսի վրայ մուրացկանութեան տոպրակը տեսնէ:

Եւ գիւղացու համար չկայ փրկութիւն այդ կողոպտողի ձեռից:

Չկայ, որովհետեւ ոչ ոք բացի կողոպտողից չի հետաքրքրվում գիւղացու գործերով:

Ցամենայն դէպս՝ կողոպտողը նախապէս «օգնում է». իսկ անյետաձգելի օգնութիւնը շատ անգամ անհրաժեշտ է լինում ամենաժուժկալ եւ աշխատասէր մարդու համար. . .

Ընտանիքի միակ աշխատաւորի երկարատեւ հիւանդութիւնը՝ լինի նա հողագործ կամ քաղաքացի (զեմստվոյի բացակայութեան շնորհիւ մեզանում չըկան ոչ հիւանդանոցներ եւ ոչ էլ ուսումնարաններ) աշխատանքի երկարատեւ սակաւութիւնը, ձիերի կամ կովերի սատկելը, վատ հունձը եւ այլն, այս բոլոր դժբախտութեան դէպքերում ոչ մի տեղից ժամանակին օգնութիւն չի տրվում, եւ դորա անխուսափելի հետեւանքն է լինում որ մուրացկանների բանակը հետզհետէ ստուարանում է:

Ահա եւ մի պատճառ եւս, որ մուրացկանութիւն է ծնում, եւ այն՝ ոչ սակաւ չափերով:

Այդ պատճառն աղքատի հոգու վերայ ծանր կերպով է ազդում:

Ժուժկալ, աշխատասէր, նոյն իսկ կիսակուշտ, իւր բարօրութեան համար ամէն տառապանք քաշած գիւղացին՝ յանկարծ տեսնում է միանգամից իւր բազմամեայ աշխատանքի ու զրկանքների արդիւնքը բոլորովին ոչնչացած, փշրուած ու խորտակուած:

Ակամայ նոյն իսկ ամենաժիր մարդու ձեռները թուլանում են, եւ նորա հոգուն յուսահատութեան զգացում է տիրում:

Նա իւր շուրջը չի տեսնում եւ չի ճանաչում ճշմարտապէս մի բարի մարդ, որ ցանկար անշահասէր հոգւով օգնութեան հասնել, եւ ոչ էլ մի հիմնարկութիւն՝ որ այդպիսի դժբախտ դէպքերում իրան ձեռնտու լինէր:

Եւ յուսահատութեան ու անօգնականութեան զգացումը ճնշում է նրան, մինչեւ որ դիմելով առաջին պատահած գինետունը՝ առաջին բաժակն է խմում:

Այս գինետուն - օգնականը, կամ աւելի ճիշդը՝ թունաւորիչ գինետունը՝ գոնէ ժամանակաւորապէս հանգստացնում է թէ՛ քաղաքացի դժբախտ բանուորին ու արհեստաւորին եւ թէ՛ թշուառ ու անզօր ինտելիգենտին. բայց յայտնի է թէ ուր է հասցնում այդ ժամանակաւոր հանգստութիւնը:

Անօգնականութի՛ւն:

Անօգնականութիւնն էլ ձգում է մուրացկանութեան ախտերի եւ թշուառ դրութեան մէջ. . .

Եւ արդարեւ, միթէ միշտ չե՞նք պատահում վատառողջ մարդոց, որոնք ձեռք են կարկառում հիւանդանոցից դուրս գալուց յետոյ՝ կազդուրուելու համար չունենալով ոչ հաց եւ ոչ բնակարան, բազմաթիւ գիւղացի ու քաղաքացի այրի կանանց՝ որոնք անտէր ու անօգնական են մնացել, առանց կերակրի, երեխաները ձեռներին. . .

Տղամարդիկ որպէս թէ աշխատանք գտնելու են գնացել, իսկ կանայք սպասում են ամիսներով, տարիներով. այդ թշուառներն ո՛չ ամուսնաւոր են, ոչ այրի եւ ոչ էլ օրիորդ. ապրում են համարեա միշտ քաղցած, իրանց խեղճուկ կեանքն են քաշքշում:

Արդարեւ սարսափելի է, երբ երեւակայում ես, թէ ի՛նչ աստիճանի կարող է հասնել մարդուս անօգնականութիւնը:

Հապա մեր «անմեղ մեղաւոր» փոքրիկ էակների վիճա՛կը, որոնք իրանց աշխատաւոր մօր ու հօր համար ծանր լուծ են:

Աւելորդ է խօսել ապօրինի ծնուածների եւ ընկեցիկների մասին, որոնց թիւը վերջերս մեզանում էլ աւելանում է:

Այդ դժբախտ երեխաների մեծ մասը ապագայի յանցաւորներ ու մուրացկաններ են:

Էլ չենք խօսում Ախալքալաքի սարսափելի երկրաշարժից յետոյ մնացած երեխաների եւ թուրքահայ որբերի մասին:

Ո՞ւր է այն կանոնաւոր ու նպատակայարմար օգնութիւնը, որին դիմելու իրաւունք ունենային. ի՞նչ դուրս կը գայ մի քանի ապաստանարաններ շինելով:

Օգնութեան կարօտ է եւ այն աշխատաւորը, որը լինելով տասը-քսան հոգու միակ կերակրող՝ ուղղակի անկարող է իւր պարտաւորութիւնները կատարելու:

Այդպիսուն անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ մի փոքրիկ նպաստ հասցնել, մինչեւ այս կամ այն «բերանը» ինքնին սկսէ իւր համար հաց ճարել. բայց այդպիսի օգնութիւն էլ չկայ, եւ ուժասպառ աշխատաւորն ընկճւում է, ու նրա ընտանիքն էլ մուրացկանութեան է դիմում:

Իսկ պատուաւոր աշխատանքի արգիլքնե՛րը. մարդս ուզում է աշխատել տոկունութեամբ. . . . . որոնում է աշխատանք, գտնում է վերջապէս, բայց ստիպուած է լինում թողնել:

Բանն այն է՝ որ այդ մարդը վերոյիշեալ պատճառներից մէկի ազդեցութեան տակ յանցանքի մէջ բռնուելով, բանդ է ծգուել երկար ժամանակով. վերջապէս իւր գործած յանցանքի համար բաւական

տանջուելուց յետոյ՝ որ նոյն իսկ դատարանի վկայութեամբ կատարել է ապրելու միջոցների սղութիւնից ու աշխատանքի պակասութիւնից ստիպուած, արձակվում է. բայց իբրեւ արատաւոր մարդ «ընդ միշտ դատապարտուած է»:

Ամէն մի փոքր ի շատէ զգոյշ մարդ հեռանում, վախենում է նրանից:

Եւ նա, որ ուժասպառ է եղել արդէն գոյութեան կռվում, աւելի եւս ծանր ու անհնարին վիճակի մէջ է ընկնում:

Բայց դատապարտուած մարդն էլ ուզում է ուտել, նրա ստամոքսն էլ շատ խիստ է եւ ոչ մի յետաձգման չի համբերում:

Ապա ուրեմն այդ դժբախտը՝ չնայելով իւր օգտակար ու պատուով աշխատող լինելու ցանկութեան՝ կարող չէ ուրիշ ընտրութիւն անել բացի մուրացկանութիւնից ու չարագործութիւնից:

Եւ այդպիսիների թիւը դժբախտաբար հետզհետէ աւելանում ու աւելանում է:

Կան մուրացկանութեան էլի մի քանի պատճառներ, եւ այդ բոլորը ցոյց կը տանք կարճառօտ կերպով, օրինակ՝ աւազակների յարձակում, հրդեհ, ծանր ուկրկնակի հարկեր, ինչպէս օրինակ Տաճկա-Հայաստանում, վրէժխնդրութիւն, զանազան վարակիչ հիւանդութիւններ՝ ամենապարզ առողջապահական գիտելիքների պակասութեան պատճառով, եւ այլն, որոնք նոյնպէս մարդկանց անկման ու մուրացկանութեան են հասցնում:

Ի՞նչ կարող է անել խեղճ գիւղացին լաւ զինուած աւազակի դէմ, եթէ մինչեւ իսկ կացին էլ չունի:

Մարդուս դժբախտութիւններն առաջ են գալիս նրանից, որ շատերն իրանց քրտինքով չեն ապրում:

Ինչ զէնքով որ յարձակուին մեզ վրայ, նոյն եւ կամ աւելի լաւ զէնքով պէտք է պաշտպանենք մեր պատիւը, մեր ընտանիքն ու մեր ունեցած-չունեցածը:

Այսպէս է աշխարհս, միայն ուժեղը յաղթող է լինում. դա մի ճակատագրական օրէնք է:

Այսպէս թէ այնպէս՝ ինքը հասարակութիւնն է մեղաւորը, որովհետեւ ոչ սէր կայ եւ ոչ էլ միաբանութիւն. իսկ որտեղ բաժանում կայ, այնտեղ է եւ այլասերում եւ մահ. . .

Բ.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

Աղքատութեան դէմ կռուել՝ նշանակում է բարելաւել մարդկային հանրակեցութիւնը՝ նուազեցնելով ու ոչնչացնելով աղքատութիւնը:

Մարդիկ վերջապէս այն համոզման հասան, թէ նպաստներ ու ողորմութիւն տալը, նոյնպէս եւ անկելանոցներ բազմացնելը ո՛չ միայն շատ թանգ է նստում, այլ եւ շատ անգամ կարօտ մարդկանց աւելի վնասում է, քան թէ օգնում. ընտելացնելով նրանց առանց աշխատանքի՝ հասարակութեան ու տէրութեան հաշուով ապրելու:

Փողով ու իրերով օգնելու փոխարէն՝ կարօտեալներին աշխատանք պէտք է տալ, նոցա տեղաւորել ուղղիչ եւ այլ այսպիսի հիմնարկութիւնների մէջ, եւ արհեստներ սովորեցնել:

Այսպէս օրինակ՝ եթէ ընկեցիկ ու աղքատ երեխաներ խնամելու գործը կանոնաւորապէս կազմակերպուի, եթէ երեխաներին սովորեցնեն արիեստներ, դրանով երկրի արտադրող ուժը կաւելանայ. նոյնը կարելի է ասել կոյրերի, կաղերի եւ դոցա նմանների մասին, որոնց այժմ բարեբախտաբար ոչ թէ ուտեցնում խմցնում են, այլ աշխատում են օգտակար աշխատաւորներ դարձնել:

Աղքատներ խնամելու ամենալաւ օրէնքը նպատակ պէտք է ունենայ ո՛չ թէ միայն աղքատութիւնն ու մուրացկանութիւնը պակասացնել, այլ եւ նորա զարգացման առաջն առնել:

Ժամանակակից բարեգործութիւնը պէտք է հասարակական խնամարկութեան լիակատար արտայայտութիւն լինի թէ ծաւալի եւ թէ պէսպէսութեան կողմից:

Բարեգործութիւնը պէտք է նպաստէ տէրութեան, ամէնքին էլ շատ գործ կայ կատարելու, եւ ամէնքն էլ պէտք է աշխատեն միեւնոյն նպատակի համար:

Չնայելով որ պետական ու քաղաքային ուսումնարաններ գոյութիւն ունին, այնու ամենայնիւ ո՛չ միայն օգտակար այլ կարեւոր է, որ ժողովրդական կրթութեան նպաստող ընկերութիւններ հաստատուին, ինչպէս եւ մասնաւոր ուսումնարաններ բացուին:

Այս միմիայն օգուտ կը տայ գործին, եւ եթէ կեանքի մէջ պատահին ոչ-ցանկանալի խոտորումներ, այդ էլ արմատախիլ անելն իշխանութիւնից է կախուած:

Աշխատանք գտնելու գրասենեակներ են բաց անում ընկերութիւնները եւ զեմստվոն. նոյնը անում

են նաեւ մասնաւոր մարդիկ շահասիրական նպատակով:

Միթէ որ եւ է թիւրիմացութիւն կարո՞ղ է առաջ գալ, եթէ նոյնպիսի գրասենեակներ բացուին բարեգործական նպատակով:

Արդ՝ այնքան շատ անելու բան կայ, որ երկար ժամանակ կը բաւէ թէ՛ տէրութեան, թէ՛ հասարակական հիմնարկութիւններին եւ թէ մասնաւոր մարդկանց:

Նոյնը կարելի է ասել եւ փոխատուութեան մասին:

Կառավարչական ու հասարակական փոխատու հիմնարկութիւնների հետ միասին անարգել գոյութիւն ունի եւ վաշխառուների կեղեքիչ փոխատուութիւնը. ինչո՞ւ չլինին բարեգործական փոխատու արկղներ (առանց տոկոսի կամ քիչ տոկոսով) այն մարդկանց համար, որոնք չեն կարող փոխ առնել պետական ու այլ հիմնարկութիւններից:

Դարձեալ՝ կառավարութեան ձեռնարկութիւններին հակառակ վարուած չեն լինիլ մասնաւոր անհատներ, եթէ կարօտեալներին գործիքներ եւ ուրիշ միջոցներ տան ժամանակով կամ ընդ միշտ օգտուելու համար:

Պետերբուրգի Մարդասիրական ընկերութիւնն այդ նպատակի համար ձրի արհեստանոցներ ունի, ուր երթեւեկ բանուոր կանայք կարող են կարի մեքենաների վրայ իրանց օգտին աշխատելու:

Գիւղատնտեսական ընկերութիւններն եւս երկրագործական գործիքների ժողովածու են կազմել, եւ ձեռնտու գներով կարօտեալներին են վաճառում:

Այդ տեսակ պահեստների մէջ կարելի է հաւաքել պատրաստ իրեր, եւ ի վաճառ հանել:

Այսպիսի պահեստներ շատ քիչ կան, եւ որչափ

էլ բարեգործական ընկերութիւններ ու մասնաւոր անհատներ աշխատեն հաստատել տակաւին ուրիշների համար էլ գործելու ասպարէզը շատ մեծ է:

Վերոյիշեալ օրինակները բաւական են ցոյց տալու, թէ մասնաւոր անհատների եւ ընկերութիւնների բարեգործութիւնը հասարակական խնամարկութեան ասպարիզում՝ գործում են կառավարչական հիմնարկութիւնների հետ միասին, եւ արդէն վաղուց Ռուսաստանի մէջ պետական կեանքի մասերից մէկն են կազմում:

Բարեգործութիւնն օգնում է օրինական գործունէութեան, նա նպաստում է կառավարչական ձեռնարկութիւններին՝ որ լիապէս ու բազմակողմանի կերպով կատարեն կարօտ ազգաբնակութեան օգնելու գործը:

Նա թէեւ պարունակում է իւր մէջ բազմաթիւ մասնաւոր բնաւորութիւն կրող կէտեր, բայց չի խառնվում կառավարչական գործերի մէջ, արգելք չի լինում, այլ ընդհակառակն նրա հետ ձեռք ձեռքի տուած՝ բաւականին օգնում է եւ թեթեւացնում նորա գործը:

Այն երկիւղը՝ թէ լայն կազմակերպուած բարեգործութիւնը կարող է կառավարչական գործերի մէջ խառնուել եւ նորա հետ ընդհարուել՝ ոչ մի էական հիմք չունի:

Այդ երկիւղն իսկապէս առաջ է բերում պահպանողական մամուլը՝ հասարակութեան ու ժողովրդի վերայ կասկած ձգելով, որով ուզում է եւ վարակել կառավարիչ մարմինը:

Բայց կեանքի մէջ ամէն ինչ իւր ընթացքով է գնում. եւ թէեւ ոչ միանգամից՝ բայց եւ այնպէս հաստատուն կերպով այն հաստատուն համոզմունք է կազմակերպվում, թէ պետական կեանքի ուժն ու

անսասանութիւնը հիմնվում է նախ եւ առաջ նրա էական տարրերի, այսինքն՝ իշխանութեան, հասարակութեան ու ժողովրդի համերաշխութեան ու փոխադարձ օգնութեան վրայ:

Այժմս արդէն շատ պարզ է, թէ աղքատութեան դէմ կռուել անմիտ բան է առանց այդ օգնութիւնն անհատական դարձնելու:

Տակաւին մասնաւոր փոխատուութեամբ, կամ որ եւ է ուրիշ միջոցով մէկին չօգնած՝ պէտք է ճշդութեամբ գիտենալ նորա կարիքի չափը, պէտք է համոզուել թէ խնդրողն արդեօք արժանի՞ է օգնութեան, թէ այդ օգնութիւնն իսկապէս նպատակայարմա՞ր է. ապա պէտք է ուշք դարձնել թէ ի՞նչպէս է գործադրվում այդ օգնութիւնը եւ այլն:

Այս բոլորը կատարելու համար՝ պէտք է անձամբ ծանօթ լինել կարօտեալների հետ, եւ անմիջական, բարոյական մասնակցութիւն ունենալ նրանց վիճակին:

Այսպիսի աշխատանքի համար՝ եթէ կատարելու լինէինք պետութեան գործակալների միջոցով, պէտք կը լինէին հազարաւոր, միլիոնաւոր ծառայողներ, որոնց պահել անկարող կը լինէր աշխարհիս ամենահարուստ պետութիւնն անգամ:

Աղքատութեան դէմ մաքառելու հիա այսպիսի ծանր հանգամանքներն ցոյց տուին, թէ անհրաժեշտ է, որ հասարակութիւնն եւս մասնակցի, որով կազմակերպուեցան բազմաթիւ բարեգործական ընկերութիւններ ոչ միայն Եւրոպայում, այլ եւ մեզանում-Ռուսաստանի մէջ. այսպէս օրինակ՝ աշխատանքով օգնելու, աշխատանքը լաւացնելու, էժան փոխատուութեան եւ այլ այսպիսի հաստատութիւններ:

Վերջապէս ազգաբնակութեան տնտեսական ներկայ դրութիւնն անհրաժեշտ կերպով պահանջում

է հասարակական կամաւոր ուժեր, որովհետեւ անհաւատալի յառաջադիմութիւն են անում մեր մէջ աղքատութիւնն ու մուրացկանութիւնը:

Չենք կարող կանգ առնել մանրամասնօրէն այս գրքում մեր ազգաբնակութեան ժամանակակից տընտեսական դրութեան վերայ:

Կարելի չէ անտարբեր աչքով դիտել մեր ազգաբնակութեան ծայրայեղ աղքատութիւնը:

Նա առաջ է բերում այլասերում՝ քայքայելով առողջութիւնը գենեմոլութեամբ, անառակութեամբ եւ վերջապէս անժամանակ մահով:

Սոցա աիարկու զօրութիւնն առաւել եւս սաստկանում է նորանոր դժբախտութիւնների պատճառով, որոնք երբեմն երբեմն այցելութեան են գալիս եւ երկիրը կատարեալ աղքատութեան մատնում:

Վերջին ժամանակներս խօսում ու գրում են, թէ հունձը վատ է. անբաւարար սնունդի պատճառով առաջ է գալիս առողջութեան քայքայում, հիւանդութիւններ եւ մահ:

Սննդարար կերակուրների գործածութիւնն այդպիսի տեղերում հետզհետէ նուազում է. տաւարների թիւը պակասում, հողն ուժասպառ է լինում, կեանքի միջին տեւողութիւնն ու աշխատանքի ժամանակը կարճանում է, եւ անտուն, առանց տնտեսութեան գիւղացիների թիւը աւելանում է տարէց տարի. իւրաքանչիւր տարի հունձի ժամանակ ընկճվում, ճնշվում է գիւղացու հոգին, թէ ապագային աւելի ծանր օրեր, աւելի խոշոր թշուառութիւններ կարող են առաջ գալ:

Երբ որ եւ է ազգի աստիճանաբար անկման աիարկու եւ սարսափելի հարցը մեր աչքի առաջն է, երբ դժբախտութեան ուրուականը սպառնում է բնաջինջ կործանել, ինչ որ թանկ է մարդուս համար,

այն ժամանակ հարկաւոր է մեր ունեցած բոլոր ուժերն ու միջոցները հաւաքել՝ մեզ վրայ յարձակուող չարիքի դէմ հզօրապէս կռուելու համար:

Միթէ այսպիսի դէպքերում կարելի՞ է չափաւորել եւ անգործութեան մատնել մեր ուժերն ու միջոցները:

Կարելի՞ է միթէ հասարակութեան զօրաւոր օգնութիւնը մերժել, երբ նախնական փորձերը պարզ հաստատում են, թէ այդ օգնութիւնն անհրաժեշտ է:

Բոլոր ուժով պէտք է նեցուկ լինինք այն անձնազոհ գործիչներին, որոնք յանուն բարձրագոյն բարոյական դրդիչների ու սկզբունքների աշխատում են:

Աղքատութեան ու նրա սարսափելի հետեւանքների դէմ եռանդուն ու անյողդողդ կերպով կռուելու անհրաժեշտ կարեւորութիւնը հարկադրում է մեզ, որ աւելի մօտիկից ծանօթանանք կռուելու միջոցների որոշ կէտերի հետ:

Այդ միջոցները շատ բազմատեսակ են, եւ մենք կը ծանօթանանք նրանցից մի քանիսի հետ:

Աղքատութեան դէմ կռուելու ամենահին ձեւը ինչպէս յայտնի է, ողորմութիւն տալն է:

Բայց հասարակական բարեկարգութեան տեսակէտով այս տեսակ մաքառման անյարմար լինելը շատ վաղ աչքի է ընկած:

Այն հանգամանքը, որ կարելի է առանց աշխատելու միմիայն ողորմութեամբ ապրել՝ շատերին գրաւում է, եւ այս իսկ պատճառով մուրացկանների թիւն անասելի արագութեամբ բազմանում:

Սակաւ առ սակաւ հասունացաւ այն գաղափարը, թէ օգնելուց առաջ պէտք է խեղճերի վիճակը քննել եւ այնուհետեւ միայն օգնութեան ձեւն որոշել:

Վերջապէս հաստատուեցաւ այն համոզմունքը,

թէ խեղճութեան ու մուրացկանութեան դէմ կռուել կարելի է մի միայն աշխատանքի միջոցով:

Աշխատանքի միջոցով օգնելն արդէն մտցրած է մասնաւոր բարեգործութեան մէջ, եւ կազմում է նորա ամենագլխաւոր մասը:

Աշխատանքով օգնելու նշանակութիւնը մեծ է:

Եթէ օգնելու այս եղանակը կանոնաւորապէս կազմակերպուած է, կարող է շահաւէտ լինել ո՛չ միայն աշխատանքից զուրկ մարդկանց կամ պատահական կերպով աշխատանք ունեցողներին, այլ եւ աղքատացած գիւղացուն, որ ամբողջ ձմեռը համարեա առանց որ եւ է աշխատանքի է մնում:

Աշխատանք տալով կարելի է օգնել նոյն իսկ անհող գիւղացիներին, եթէ մեր հարուստները չեն ուզում հող գնել, քանի ժամանակը ներում է, եւ տալ գիւղացիներին երկարժամանակեայ կապալով:

Ինչպէս յայտնի է, գիւղացիների աղքատութեան ամենագլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ նոցա հողաբաժինները նոյնն են մնացել, չնայելով իրանց աճեցողութեան:

Աշխատաւորների թիւն աւելանում է, այն ինչ նորա հողը պակասում է. արդիւնաբերութիւնն եւս անկարող է ազատ ձեռներին գործ տալ, եւ վերջապէս դրանից ի՞նչ օգուտ:

Այսպէս ուրեմն աշխատանքով օգնելը վերականգնում է ազգաբնակութեան բարօրութիւնը ո՛չ թէ անբարոյականացնելով ողորմութեամբ, ո՛չ թէ պատահաբար ու ժամանակաւոր կերպով, այլ կատարելապէս առողջ ու գիտակցական միջոցով, եւ այն էլ՝ այնչափ ժամանակ, որ չափ որ աշխատել կարող է:

Աշխատանքով օգնելն ընդհանրապէս պէտք է արտայայտուի հետեւեալ ձեւերով:

Զգտելով անգործութեան առաջն առնել՝ նա պէտք է նախ եւ առաջ կարօտեալներին աշխատանք տայ:

Այս նպատակին օգտակարապէս կարող են ծառայել աշխատանոցները:

Աշխատանոցները ժամանակաւոր աշխատանքի տեղեր պիտի լինին, եւ այն էլ յատկապէս այն մարդկանց համար, որոնք ուզում են աշխատել փակ հիմնարկութիւնների մէջ:

Աշխատանք չունեցողների համար պէտք է հաստատել բանուոր վարձելու միջնորդ գրասենեակ, պէտք է յարաբերութիւն ունենալ գործ տուողների հետ, վերջապէս արհեստանոցներ շինել եւ այն. անգործներին ընտելացնել աշխատութեան՝ դնելով նոցա տնտեսական վիճակը ամուր հիմքերի վերայ, եւ կարելիին չափ տալով նոցա երկարժամանակեայ գործ:

Այս տեսակէտով ցանկալի է, որ մի ընկերութիւն կազմուի, եւ հանգամանքներին նայելով՝ կա՛մ պարտքով եւ կամ առանց յետ առնելու բանուորներին գործիքներ ու աշխատանքի նիւթեր բաժանէ:

Դարձեալ պէտք է հոգալ, որ կարօտ մարդկանց ձեռագործները վաճառուին, նրանց նորանոր պատուէրներ տրուին եւ այլն:

Ոչնչացնել նոցա բնակարանների առողջապահութեան հակառակ զզուելի պարագաները, հոգալ որ սննդարար կերակուր ստանան, կռուել գինեմոլութեան եւ այլ ախտերի դէմ, որոնք քայքայում են աշխատաւորի թէ՛ առողջութիւնը եւ թէ աշխատելու ուժը:

Այս նպատակով պէտք է շինել տնակներ, էժան ու ձրի ճաշարաններ, թէյանոցներ եւ այլն:

Պէտք է հոգ տանել, որ ազգաբնակութիւնը

հեռու մնայ վայրենի զբօսանքներից ու ախտերից, ուստի հարկաւոր է սարգել մատչելի ու խելացի զուարճութիւններ, ընթերցմունքներ, գրադարաններ եւ այլն:

Աչքի առաջ ունենալով, որ շատ անգամ աշխատանքը չի գնահատվում, որովհետեւ արհեստի կստարելութեան կողմից պակասութիւններ է ներկայացնում, կարեւոր է՝ աշխատանքով օգնելու ժամանակ՝ խնամք տանել նաեւ արհեստի բարելաւութեան, եւ այդ նպատակով արհեստաւորաց ուսումնարաններ, արհեստագիտական դասընթացքներ եւ այլն հիմնել:

Վերջապէս աշխատանքով օգնելու մէջ պէտք է գործադրել եւ այն միջոցները՝ որ կան աշխատաւորների առողջութիւնը զօրացնելու, ինքնագործունէութեան եւ նոցա փոխադարձ օգնութեան վերաբերմամբ:

Այս նպատակով աշխատաւորների մէջ պէտք է սպառողների ընկերութիւն, թաղման ու փոխադարձ օգնութեան արկղներ հիմնել, որոնք կը նպաստեն միանգամայն վաստակի շատանալուն, խնայողութեան, եւ միմեանց կապահովացնեն փոխադարձ օգնութեամբ նիւթական ծանր ժամերին, եւ այլ դժուարին հանգամանքներում:

Գ.

ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ.

Աղքատի միակ փրկութիւնը այն ընդհանուր բժշկութիւնն է, որ միաժամանակ եռանդով կատարվում

Է. իսկ այդ կարող է իրականանալ, երբ հասարակական կազմուածքի միջից միաժամանակ դուրս կը հանուին այն բոլոր պատճառներն, որոնք այնչափ կորստաբեր ազդեցութիւն ունին նորա վերայ:

Սկսենք գինեմոլութիւնից:

Պէտք է խիստ ալքոհոլիզմը զանազանել քրոնիկականից, այսինքն՝ պատահական հարբեցողութիւնը թունդ խմիչքներ մշտապէս գործածելու սովորութիւնից:

Թէեւ կան օրինակներ՝ երբ պատահական հարբեցողութիւնն եւս մահով է վերջացել, սակայն այդպիսի հետեւանքներ շատ չեն լինում:

Մինչեւ իսկ կարելի է ասել, թէ ընդհանրապէս փողոցներում շատ սակաւ են պատահում անզգայ հարբածներ:

Պէտք է ասել նաեւ, որ հարբեցողութիւնը հայկական ախտ չէ, բայց յամենայն դէպս՝ դարձեալ խմում են, եւ աւելի գինի, լիքէօռ եւ այլն, քան թէ օղի:

Բայց որ ալքոհոլիզմը իւր բոլոր ուղղակի եւ անուղղակի սարսափելի հետեւանքներով տարածվում է, այդ կարելի չէ հերքել:

Ալքոհոլիզմը մի քանի խանգարումների անմիջական պատճառ է՝ գլխաւորապէս նեարդային համակարգութեան վնասում, նայելով վնասուելու աստիճանին՝ հիւանդութիւնն արտայայտվում է զանազան նշաններով՝ ձեռների ու ոտների դող, ցնցումներ, ընկնաւորութիւն եւ սպիտակ տենդ:

Բայց հարբեցողութիւնը պատճառ է դառնում եւ ուրիշ հիւանդութիւնների զարգացման ու զօրացման՝ առաջ բերելով օրգանական ծանր քայքայումներ, օրինակ՝ թոքախտ, երեխաների մէջ մինինկեդ (ուղեղի թաղանթի բորբոքում):

Ինչ եւ լինի՝ օղի գործածելու սովորութիւնը

մեծապէս դժուարացնում է մի քանի հիւանդութիւնների բուժումը՝ ունենալով երբեմն նաեւ ճակատագրական հետեւանք:

Մի դժբախտ ալքոհոլիկ պատահաբար վիրաւորեց իւր ոտը: Վէրքը սկսեց փտել (գանգրենայ), եւ կանայագոյն միսը կտոր-կտոր բաժանվում էր ոսկորից, որը համարեա բացուել էր:

Առողջանալու եւ ոչ մի յոյս:

Անբախտը պէտք է հոտէր ու մեռնէր:

Այս բոլորը դեռ ոչինչ, եթէ ալքոհոլիկները չը-տային իրանց սերնդին կորստաբեր հակումներ:

Ալքոհոլիկ ծնողների զաւակները շատ նիհար ու թոյլ են ծնվում, եւ որոշ հիւանդութիւնների տրամադրուած են լինում:

Ալքոհոլիզմը, բացի սիֆիլիսից, շատ մեծ դեր է խաղում խելագարութեան յառաջացման մէջ:

Ալքոհոլը պատճառ է դառնում նոյնպէս անձնասպանութեան:

Բոլոր գիտնականներն էլ հաստատում են, թէ ալքոհոլի չարաչար գործածութեան հետ կապ ունեցող յանցանքների ու յանցաւորների թիւը՝ ընդհանուր թուի 70 տոկոսն է կազմում:

Ազդելով կորստաբեր կերպով բարոյականութեան վերայ՝ ալքոհոլը սակաւ վնաս չի տալիս մարդուս նաեւ ֆիզիքապէս:

Ալքոհոլիկը նիհար ու դեղնած է լինում. նա կորցնում է իւր կենսական ուժերի մի մասը, եւ իւր ժառանգներին մնացորդն է տալիս զանազան նեարդային հիւանդութիւնների հետ միասին, որոնք սերունդն են մեռցնում:

Ալքոհոլը առողջութիւնն է քայքայում, մահն է մօտեցնում, եւ ընտանիքի ու հասարակութեան համար պատիժ-պատուհաս է դառնում:

Ընտանիքի մէջ նա վատ ժառանգութիւն—մուրացկանութիւն է մտցնում, այլանդակում է նորա անդամներին. երեխաներին երեսն ի վայր թողնելով՝ փնացնում է եւ մուրացկան, դատարկապորտ ու պոռնիկ է դարձնում:

Որպէս զի կարելի լինի ալքոհոլիզմի տարածման առաջն առնել՝ պէտք է ճշտութեամբ գիտենալ այս կորստաբեր կրքի առաջացման գլխաւոր պատճառները. բայց այդ պատճառները շատ բարդ են:

Անկասկած՝ հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ, եւ մասնաւորապէս այն մարդկանց մէջ, որոնց զգացումներն 'ի բնէ, կամ կրթութեան եւ կամ զանազան պատճառներով բթացել են, աւելի կամ պակաս չափով, այնպիսի մարդիկ են պատահում, որոնք շարունակ ուժեղ ու բիրտ զգացումներ ստանալու հետամուտ են, դոցա մէջ որոնելով բոպէական հաճոյք:

Եւ որովհետեւ այդ տեսակ զօրաւոր հաճոյքներից հարբեցողութիւնն աւելի հեշտ է ձեռք բերվում, այդ պատճառով էլ մարդիկ անձնատուր են լինում. իսկ որտեղ հարբեցողութիւնն ու անառակութիւնն է տիրում, այնտեղ է եւ սիֆիլիսը իւր ահաւոր հետեւանքներով:

Կամաց-կամաց այդ հակումը սովորութիւն է դառնում, եւ սովորութիւնն էլ պահանջ:

Եւ քանիսնե՛ր այդ հարբեցողների հետ գինետուն են գնում՝ թունդ խմիչքների գրգռման մէջ փնտռելով միայն իրանց քայքայուած ուժերը վերականգնելու միջոց. ո՛ր քան մարդիկ գնում են այնտեղ, իրանց ճնշող հոգսերից, տխրութիւնից, հալ ու մաշ անող վշտերից ազատուելու եւ հարբեցողութեան մէջ առժամանակեայ մոռացումն գտնելու համար:

Վերջապէս շատ շատերն՝ այդչափ չընկնելով

հանդերձ, գնում են գինետուն իբրեւ մի ժողովարան՝ իրանց ծանօթներին տեսնելու համար· ո՛ւր է, թէ գիրք, լրագիր կարդային, բայց դժբախտաբար ամբողջ գիշերները թուղթ են խաղում, կամաց-կամաց խմել են սովորում, եւ այդ սովորութիւնը հետզհետէ պահանջ է դառնում.

Անկասկած շատ ցաւալի է, բայց պէ՞տք է արդեօք զարմանալ:

Ոչ. եթէ միայն մտներս բերենք այն բնակարանը, որտեղից բանուորն է դուրս գալիս, այն խեղդիչ ու ժահահոտ նկուղները, ուր ձմեռը սառնամանիքն է նեղում, իսկ ամառը կիզիչ շոգն է այրում, որտեղ երեխաներն են ծնվում, սպիտակեղէն են չորացնում, որտեղ կինը յաճախակի հայհոյանքներ է լսում ու արտասվում:

Եւ այսպէս մեր հանդէպն է գալիս հասարակ ժողովրդի բնակարանի ծանր խնդիրը, որի մասին շատ անգամ է գրուել:

Հետաքրքրուեցէք ու տեսէք՝ թէ արդիւնաբերական կենդրոններում ի՞նչպէս են ապրում բանուորները:

Ի հարկէ մասնաւոր նախաձեռնութիւնն աւելի շատ բան կարող է անել, քան թէ արել է մինչեւ ցայժմ. եւ պէտք է նրանից շատ բան սպասել, եթէ ձեռնարկէ այնպիսի ընկերութիւններ հաստատել, ինչպէս որ են Անգլիական կամ Ամերիկական «էժան բնակարաններ հիմնարկող ընկերութիւնները»:

Այդպիսի բնակարաններ մէկ, երկու, երեք կամ չորս սենեակով կարող է նաեւ որ եւ է քաղաք կամ բաժնորդական ընկերութիւն շինել. աւելորդ է ասելը, թէ այս ձեռնարկութիւնը բացի բարոյական օգուտից նիւթական մեծ օգուտ եւս կը տայ:

Ախտերն ու մուրացկանութիւնը աիռելի ու

մռայլ անկիւններ են որոնում, ինչպէս որ բանուորների բնակարաններն են. նոքա պատրաստի հող են սիրում եւ զարգանում, ինչպէս սունկը ջրի վերայ:

Բայց թոյլ տուէք որ օդի ալիքներն ազատ ու համարձակ այդ մռայլ փողոցներում խաղան, բացէք առուներ, որպէս զի կանգնած հոտած ջրերը, որոնք աղբիւրները կոյանոց են դարձնում, ազատ հոսեն, շինեցէք փողոցների երկարութեամբ լայն մայթեր, տնկեցէք ծառեր, մաքրեցէք գաւթի սալայատակը, սպիտակացրէք տան ճակատը, առողջացրէք տունը, եւ իսկոյն ինչպէս գիշերային թռչուններ, որոնց ցերեկուայ լոյսն է հալածում, անկարգութիւնը, ցեխը, վարակիչ հիւանդութիւնները կանցնեն աւելի վատթար կեղտոտ տեղեր:

Առողջարար բնակարանն ազդում է բարոյականութեան վերայ, եւ իւր բնակիչներին է պահպանում:

Նա ընտանեկան յարկն ազնիւ ու հաճոյական է դարձնում. իրեն է գրաւում գերդաստանի գլխաւորին օրական աշխատանքից յետոյ հանգստանալու, եւ ապագային էլ հեռի կը պահէ նրան գինետներից:

Ապա ուրեմն լաւ բնակարանն այն միջոցներից մէկն է, որ ժողովրդի բարոյական ազնուացման է նպաստում:

Կարելի է նոյնպէս պնդել, թէ այն բոլոր տեղերը, ուր բանուորը իւր ընկերների հետ հաճոյական ժամեր է անցկացնում, ամենայն յաջողութեամբ գինետան հետ կարող են մրցել:

Հարկաւոր է միայն գինետունը «թէյարանի կամ սրճարանի» փոխել, եւ միջոց տալ գիւղացուն կամ բանուորին, որ առանց իրան վնասելու մի կամ երկու ժամ անցկացնէ տնից դուրս թէյի բաժակի առաջ:

Այսպիսի փոփոխութիւններ մտցնելու հոգսը նախապէս պէտք է կրեն «ժուժկալասէր ընկերու-

թիւնները», հոգեւորականութեան, քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները ու գիւղական տանուտէրերը:

Պէտք է ամէն տեղ օրինակներ տալ. սկզբում թէկուզ միայն մի քանի թէյարաններ ու սրճարաններ ամեն մի գաւառում հաստատել, բերել տալ թէյարանի համար ժողովրդական գրքեր, լրագիրներ. այնուհետեւ այդպիսի թէյարաններ հիմնողներ ամէն տեղ էլ կը գտնուին, եւ նոյն իսկ կարող են գրադարաններ կազմել:

Ի հարկէ այդ թէյարանները կը գտնուին տեղական իշխանութիւնների աչալուրջ հսկողութեան տակ, եւ այդտեղ ոչինչ հակաօրէնական ու քաղաքական բան կարող չէ լինել:

Այսպիսի բարեփոխումներով կը պակասի բանդարկուողների թիւը, պետական հարկերը լիով կը հաւաքուին, մշակը կը սիրէ իւր արօրը, եւ տէրութեան ու հասարակութեան օգտակար քաղաքացիներ դուրս կը գան:

Այժմ Ռուսաստանում տարածվում են ժուժկալասէր ընկերութիւններ. թող այդ ընկերութիւնները մեզ օրինակ լինին:

Հոգաբարձութեան բոլոր անդամները, որոնց մէջ մտնում են նաեւ իրանց օրինակով ու խօսքով ժուժկալութեան նպաստել ցանկացող տեղական բնակիչները (եւ մեր կողմից կ'աւելացնենք՝ իրանց օրինակելի վարքով եւ ժուժկալութեամբ յայտնի եւ սրբի պէս իրանց ընտանեկան յարկը պաշտողներ) իրաւունք ունին գինետները մտնել եւ հսկել կարգապահութեան՝ ինչպէս աքցիզի պաշտօնեաները:

Նոքա պէտք է նայեն, որ ոգելից խմիչքների վաճառումը օրէնքի համաձայն լինի. . .

Ժողովրդի մէջ հարբեցութեան վնասակար լի-

նելու մասին ճիշդ գաղափար տարածելու համար կարող են բաժանել այնպիսի գրքեր, որոնց մէջ մանրամասն խօսվում է թէ ի՞նչ վնասակար ազդեցութիւն ունին գինին ու օղին մարդուս առողջութեան վերայ. հոգաբարձութիւնները կարող են թէյարաններ ու ճաշարաններ հիմնել, ուր գիւղացիները կարող են հաւաքուել եւ զրոյց անել թէյ խմելով, որ թէ՛ առողջարար է եւ թէ՛ աւելի էժան:

Բացի գրքերից ու լրագիրներից կարելի է զուարճանալու համար նարդի (շաշկա) կամ մի ուրիշ խաղ խաղալ՝ ի հարկէ առանց որ եւ է շահասիրական նպատակների:

Թէյարանների պատերի վրայ կարելի է կախել Ս. գրքից առնուած պատկերներ՝ ցոյց տալու համար հարբեցութեան վնասակարութիւնը, կամ որ եւ է ուրիշ բարոյական խրատ:

Քիչքիչ ժողովուրդը կընտելանայ այս նոր հիմնարկութիւններին, ուր չեն լինիլ օղի, գինի, գարեջուր, բայց կարելի կը լինի հաճոյական ու օգտակար ժամանակ անց կացնել:

Նոյն նպատակով հոգաբարձութիւնները կարող են վիճաբանութիւններ սարքել. . .

Կարելի է բաց անել յատուկ ընթերցարաններ ու ժողովրդական գրադարաններ, ուր գիւղացիներն եւ առհասարակ փոքր ի շատէ գրագէտները յաճախէին մտաւոր սնունդ ստանալու համար:

Անգրագէտներին մեծ ծառայութիւն կարող է մատուցանել ժողովրդական դասախօսութիւնը մոգական լապտերի օգնութեամբ:

Բացի այս ամենից՝ հոգաբարձութիւնները կարող են սարքել եւ շատ ուրիշ բաներ՝ նայելով տեղական պայմաններին, օրինակ՝ երաժշտական—երգեցողութեան երեկոյթներ, թատրոնական ներկայացումներ եւ այլն:

Այսպէս գործելով ժուժկալասիրական հոգաբարձութիւնների նպատակը չէ, եւ օրէնքն էլ Ռուսաստանի մէջ չի տրամադրում, ալքոհոլի գործածութիւնն իսպառ վերցնել:

Ելեւմտից մինիստրի տեղեկագիրը հաստատում է, թէ ոգելից խմիչքներից այժմ չարաչար գործ է դրվում գինին՝ խնձոյքների ժամանակ, եւ այդ պատճառով էլ հոգաբարձութիւնները իրանց ուշադրութիւնը պէտք է դարձնեն այդ տեսակ չարաչար գործադրութեան դէմ:

Բայց կեանքը ցոյց է տալիս, որ ոգելից խմիչքների չափազանց գործածութիւնը շատ սակաւ է չափաւորուած:

Ալքոհոլի ազդեցութիւնը նեարդային համակարգութեան վրայ այնքան խորունկ ու քայքայիչ է, որ երբեմն փոքր ի շատէ երկար ժամանակ եւ առատութեամբ ալքոհոլով թունաւորելուց յետոյ՝ ստիպվում է մարդս շարունակ խմել, եւ այնուհետեւ գրեթէ անհնարին կը լինի այդ ախտից ազատուել:

Ապացուցուած է, որ ալքոհոլի ծարաւ լինելը ինքն ըստինքեան կազմուածքի թունաւորման հետեւանք է. եւ որ հարբեցողութիւնը միշտ զարգանում է այն մարդկանց մէջ, որոնք սկզբում քիչ թէ շատ գործածել են խմիչքներ:

Այս պատճառով ալքոհոլիզմի դէմ կռուելու գլխաւոր նպատակը պէտք է լինի իսպառ վերցնել ոգելից խմիչքների գործածութիւնը:

Որովհետեւ ոգելից խմիչքների չարաչար գործածութիւնը կարծես օրէնք է դարձել, այդ պատճառով նորա դէմ կռուելու միակ արմատական միջոցն այն է, որ բոլորովին չգործածուին, եւ թող այդ լինի մեզ համար նոր կազմակերպուած ժուժկալասիրական ընկերութիւնների նշանաբանը:

Այսպէս ուրեմն ալքոհոլիզմի դէմ կռուելու համար՝ հարկաւոր են բազմատեսակ միջոցներ, որոնցմով միայն կարելի կը լինի ժողովրդի վրայ առողջաբար ու բարերար ներգործութիւն ունենալ:

Ժողովրդական ժողովարաններ, թատրոններ, կիրակնօրեայ դպրոցներ, ժողովրդական ընթերցումներ, ընթերցարաններ, գրադարաններ, խաղեր, երգեցողութիւն, մարմնամարզութիւն, կրթական զբօսանքներ—ահա մաքառելու միջոցներ:

Ալքոհոլիզմի դէմ կռուելով այսպիսի գործօնների միջոցով, լայնացնելով ժողովրդի աշխարհահայեցողութիւնը, լուսաւորելով նորա միտքը, զօրացնելով եռանդը, արդիւնաբերելու կարողութիւնը, ահ հրաժեշտ է այդ բոլորն միացնել աշխատանքով օգնելու միջոցների հետ, որովհետեւ միայն այդպէս կարելի է ծանրակշիռ հետեւանքների հասնել՝ հարբեցութեան դէմ կռուելիս, եւ որ գլխաւորն է, թող այդ միջոցները ծառայեն իբրեւ նախազգուշութեան հնարներ:

Թող խեղճ ժողովուրդը՝ այդ հասարակութեան ու պետութեան հիմունքը՝ գիտենայ, թէ անշահասէր մարդիկ ունի, որոնք պատրաստ են անձնազոհութեամբ իւր բարօրութեանը ծառայելու:

Տուէք մասնաւոր նախաձեռնութեան աւելի լայն ասպարէզ գործելու, միանգամայն լուրջ բարեփոխումներ մտցրէք ժողովրդի տնտեսական—իրաւաբանական կեանքի մէջ, եւ գեղեցիկ հետեւանքներն ակնյայտնի կ'երեւնան:

Դ.

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԿԱՐՕՏ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Էժան բնակարաններ են շինվում այն բանուորների համար, որոնք վաստակի պակասութիւնից, ընտանիքի բազմանդամութիւնից եւ այլ պատճառներից ստիպուած՝ բնակվում են հակառողջական բնակարանների մէջ:

Դրանք շատ վատ ազդեցութիւն ունին աշխատաւորի ուժի վերայ. նրան տկարացնում, քայքայում են եւ երիտասարդ սերունդին էլ մեծապէս վնասում:

Էժան ու առողջ բնակարանների կարիքը շատ մեծ է, անհրաժեշտ է, եւ այս խնդիրն առաջնակարգ նշանակութիւն ունի:

Մտնելով աղքատների բնակարանները (բժիշկներն ամէն տեղ մուտք ունին) համոզվում ես, որ այդտեղ ապրողների բարոյական թերութիւնների մեծ մասը միմիայն վատառողջ կեղտոտ ու նեղուածք տների հետեւանք է:

Կարելի չէ չհամոզուել, որ գինետունն անոր համար միայն գրաւիչ է, որ բանուորի բնակարանից աւելի լաւ է, որ այնտեղ լոյս կայ, արեւի ճառագայթ կայ, այնտեղից երկինքն ու բնութիւնը կարելի է տեսնել:

Բնակարանները բարելաւելու միջոցներ կարող են ճարուել, եթէ բարիք գործելու ցանկութիւն լինի. պէտք է գնել հին տներ, վերանորոգել, աշխատեցնելով նոյն իսկ իրանց ապրողներին, թէ՝ նախաձեռնողը կ'օգտուի, եւ թէ աղքատներն էլ էժան վարձով

մաքուր ու առողջ բնակարաններ կունենան եւ կասկած չկայ, որ միշտ լաւ վարձ էլ կը վճարեն:

Կարելի է նոցա վերայ ազդել եւ բարոյապէս. մի քանիսին համոզել՝ որ իրանց կռիւներն ու վէճերը վերջացնեն, միւսներին՝ որ իրանց երեխաներին ուսումնարան ուղարկեն, ոմանց էլ՝ տնտեսել իրանց վաստակի մի մասը սեւ օրուայ համար. . . եւ այլն:

Բնակարանները լաւացնելու համար Լօնդոնում կազմուել են ընկերութիւններ, եւ իրանց նպատակին աւելի լաւ հասնելու համար՝ նշանակել են առողջապահութեան հսկող պաշտօնեաներ, որոնք ընդհանրապէս կանայք են:

Կինն աւելի շուտ եւ հեշտ կերպով է ընտելանում աղքատներին, լաւ գիտէ թէ առողջապահութեան հետ ի՛նչպէ՛ս սերտ կապուած են ընտանեկան կեանքի պայմանները, եւ լաւ նշմարում է բնակարանների առոջապահութեան նկատմամբ ունեցած պակասութիւնները:

Այսպիսի միաբան գործունէութեան շնորհիւ Լօնդոնում մի ամբողջ արուարձան՝ որ յայտնի էր իբրեւ հակառողջապահական՝ կատարեալ վերանորոգութեան ենթարկուեցաւ:

Հին, վատառողջ ու կեղտոտ տների փոխանակ բանուորների համար շինուեցան առողջարար ու յարմար բնակարաններ:

Ահա մեր տիկինների համար գործելու գեղեցիկ ասպարէզ, չխօսելով, որ հոգեւորականութիւնն եւս մեծ գործ կարող է կատարել:

Բացի առողջապահութեան վերատեսուչներից, որոնք ծառայում են բարեգործական ընկերութիւնների մէջ, Անգլիայում կան նաեւ պաշտօնական վերատեսուչներ:

Դոցա աշխատանքն արդիւնաւոր է այն պատ-

ճառով, որ օրէնքի հովանաւորութիւնն են վայելում:

Մասնաւոր տների առողջապահական պայմանները լաւացնելը, հին տներ գնելը, վերանորոգելն ու յարմարացնելը՝ բանուորների բնակարաններ լաւացնելու գործի միայն մի մասն է:

Ընկերութիւնների գլխաւոր ջանքը պէտք է լինի բոլորովին նոր տներ շինել, նոր յարմարութիւններով ու սիստեմով:

Աղքատների համար նոր տներ մի քանի տեսակ են շինվում:

Ամենատարածուածը—մեծ եւ երբեմն սիագին շինութիւններ են՝ առանձին սասնձին բնակարանների բաժանուած:

Աւելորդ է ասել, թէ առողջապահութեան տեսակէտով՝ բնակարանները կատարելապէս գոհացուցիչ են:

Նոցանից շատերը ունին գաւիթ, պարտէզ, տղոց խաղալու հրապարակ, բաղնիս, ընդհանուր դահլիճ, գրադարան եւ այլ ընդհանուր տեղեր:

Լօնդոնում այժմ հինգ հարիւր այսպիսի տներ կան, մօտ յիսուն հազար բնակիչներով:

Ի հարկէ այդ տների մէջ կան որոշ կանոններ, օրինակ՝ բնակիչներից ոչ մէկին, մի քանի տներում, չեն տալիս մուտքի դռների առանձին բանալի:

Դռները բացվում են առաւօտը ժամը հինգին եւ փակվում են գիշերուայ ժամը տասնին:

Եթէ այդտեղ ապրողն տնից դուրս գալ է ուզում, կամ թէ տուն դառնալ ժամը տասնից յետոյ, այն ժամանակ դռնապանին անհանգիստ անելուն համար որոշ վարձ պէտք է վճարէ:

Այս պայմաններից շատերը կարող են խիստ երեւնալ:

Սակայն փորձը ցոյց տուեց, որ մի յարկի տակ ապրող բազմաթիւ բանուոր ընտանիքների մէջ,

կարելի չէ կարգ ու խաղաղութիւն պահպանել առանց այսպիսի խիստ կանոնների:

Ապացուցուած է նոյնպէս, որ այդ կանոններն ապրողների վրայ բարոյական գեղեցիկ ազդեցութիւն ունին, եւ նրանք վերջ ի վերջոյ բոլորովին ընտելանում ու սովորում են փոխադարձ յարմարութիւններն ու շահերը պահպանող կանոնները յարգել, եւ իրանք էլ խիստ կերպով հսկում են, որ այդ կանոններն անխափան կատարուին:

Դանիայի «բանուորական դաշնակցութեան» միլարկանի տներից ամէն մէկում 7-8 բնակարան կայ:

Այդ տեսակի բնակարաններ բանուորներին աւելի յարմար ու ձեռնտու են, քան թէ ահագին տները:

Բարեգործական ընկերութիւնները, մասնաւոր նախաձեռնողները, քաղաքային ինքնավարութիւնը, Լօնդոնի ծայրերում, շնորհիւ էժան լաւ ճանապարհների՝ գնում են ահագին հողեր, եւ շինում են երկուերեք յարկանի տներ, երկու-երեք սենեակով, խոհանոցով եւ սեղանատնով:

Տան կից գտնվում է մի կտոր հող, որ ծառայում է իբրեւ գաւիթ, պարտէզ եւ բանջարանոց:

Այդպիսի տներ (քօթեդժ) վարձով են տրվում մի ընտանիքի:

Ի միջի այլոց այդպիսի տներ կարելի էր շինել Թիֆլիսում (Հաւլաբարում) քաղաքի ծայրում, որտեղ մարդիկ նկուղների մէջ են ապրում:

Դժբախտաբար այդպիսի տներ բոլոր բանուորներին մատչելի չեն:

Վերջին ժամանակներս գործակցական (կոոպերատիւ) ընկերութիւններն այսպիսի տների տէր են ուզում դառնալ:

Տուն գնող բանուորը տալիս է նախ արժէքի մի

մասը, իսկ մնացած մասը մատուցանում է 10—15 տարուայ ընթացքում շաբաթական մի որոշ գումար: Ցարմար, առողջ, մաքուր ու տեսքով սիրուն բնակարաններ ունենալու եւ այնտեղ ապրելու հնարաւորութիւնը նպաստում է միջավայրի ազնուացման, զարգացնում է ժողովրդի մէջ մաքրասիրութիւն, տնտեսութիւն, կարգ եւ առհասարակ իւր վիճակը բարւոքելու ձգտում:

Այսպիսի էժան բնակարաններ Եւրոպայում հիմնելը հեշտ է, որովհետեւ մասնաւոր մարդիկ բաւականանում են այն փոքր տոկոսով, որ իրանց ծախած գումարին ստանում են:

Հէնց այսպիսի հիմնարկութիւնների միջոցով կարելի է կազմակերպել աշխատանքով օգնելու գործը, կարելի է իրագործել աղքատներին էժան ու յարմար բնակարաններ տալու խնդիրը:

Աշխատանքով օգնելու հաստատութիւններին անմիջապէս կից են գիշերային ապաստանարանները, որ ինչպէս հասարակական վարչութիւնների, այնպէս էլ աշխատանքով օգնելու հոգաբարձուների գործն է:

Այդ գիշերային ապաստանարաններն անհրաժեշտ են, որովհետեւ գիշերներն ընդունում են ընդհանրապէս առանց ջոկելու գիշերելու կարիք ունեցողներին:

Այդ պատճառով գիշերային տների մեծ մասը լցւում է կաղերով, զառամեալ ծերունիներով, ալքոհոլիկներով եւ այլ հիւանդ մարդկանցով, որոնք բոլորովին աշխատանքի ապիկար են:

Այսպիսի գիշերային տներն էլ աշխատանքով օգնելու հոգաբարձութեան հոգսի առարկան պէտք է լինին, թէեւ նոցա մէջ մտնողներն, աշխատանքի պակասութեան եւ ուրիշ պատճառների շնորհիւ եւ կամ իրանց շրջապատողների ազդեցութեամբ, շուտով

իրանք էլ ընկնում են այդ միջավայրին յատուկ ախտերի մէջ, եւ բաւականին շուտ կորցնում են նոյն իսկ աշխատելու ընդունակութիւնը:

Ֆրանսիացի Պոլիանը խորհուրդ է տալիս գիշերանոցի բնակիչներին մի քանի աշխատանքներ տալ, որ անհրաժեշտ են գիշերային տների եւ միանգամայն նոցա մէջ կարգ ու մաքրութիւն պահելու համար:

Գիշերանոցի բնակիչները կարող են իրանց սպիտակեղէնը եւ իրանց շորերը լուանալ, գիշերանոցի յատակը, պատուհանները, պատերը սրբել, փայտ պատրաստել, դռնապանի ու հնոցապանի եւ այլ այսպիսի գործեր կատարել:

Այդ պարտաւորութիւնների մի մասը գիշերանոցի բոլոր մարդիկը անպատճառ պէտք է կատարեն, իսկ միւսները՝ գիշերելու վարձի փոխարէն:

Ցանկալի է, որ նոքա մի քիչ տաք կերակուր, կամ թէ չէ՝ հացով թէյ ստանան:

Թէյանոցները ցուրտ ժամանակ բաւարարութիւն տալով իբրեւ տաքանալու տեղ, քիչ էլ սնունդ են տալիս հաց մատակարարելով:

Այսպէս էլ ճաշարաններն երբեմն առանձին պայմանների շնորհիւ կարող են համարեա բոլորովին ձրի լինել, եւ կամ շատ էժան. այսպէս օրինակ՝ կերակրի գինը հինգ կոպէկ:

Ե.

ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐ.

Աշխատանոցներն այն տներն են, որ գործաւորներից ոմանց միջոց են տալիս ընդհատուած աշ-

խատանքը շարունակելու, միւսների համար ուսում նարան են, որտեղից հասարակութեան պիտանի-մարդիկ են դուրս գալիս, որոնք երբեմն սովոր չէին եւ անպատրաստ էին աշխատելու:

Ժողովուրդը հետեւելով այն սկզբունքին, թէ «Քրիստոսի անունով խնդրողին տուր», իրաւունք չի համարում ջոկել մուրացկաններին, եւ միապէս ողորմութիւն է տալիս ամէն մի խնդրողի առանց բացառութեան:

Շատերը սրբութեամբ կատարում են այդ օրէնքը, օգնելով առանց խտրութեան ամէն մի կարօտեալի, համարելով բարեգործութիւնը իբրեւ հոգու փրկութեան մի միջոց եւ ոչ թէ հասարակական բարօրութեան մի գործիք եւ նոյն իսկ պետական կեանքի կարեւորագոյն խնդիրներից մէկը:

Անիտիր ողորմութիւն տալն առաջացնում է ծրիակերութիւն, մուրացկանութիւն, եւ միանգամայն բազմացնում է յանցանքների թիւը յատկապէս սեփականութեան դէմ գործուածները:

Այդ պատճառով առաջին անգամ կռիւ սկսեցին մուրացկանութեան դէմ ազատ դաշնակցութիւնները-բարեգործական ընկերութիւնները—այսպիսի նշանաբանով. «ողորմութիւն տալիս՝ մուրացկանութիւնից պէտք է ազատել աշխատանքով ապրելու ընդունակ մարդոց, եւ զառամեալներին ու հաշմանդամներին խնամել. իսկ մանուկ-աղքատներին դաստիարակել»:

Ո՞վ չի լսել այն մութ անկիւնների մասին, որտեղ արհեստով մուրացկաններն կեղծ թղթեր են պատրաստում, իբրեւ թէ իրանց տունը հրդեհուել է, տաւարները սատակել են:

Գրում են նոյնպէս զանազան նամակներ՝ բարեգործներին ուղղուած:

Կան մինչեւ իսկ մուրացկաններ, որոնք չնայելով

որ տներ ու մեծ գումար ունին, բայց եւ այնպէս իրանց գործը չեն թողնում:

Վարշաւայում մի մուրացկան մեռաւ, որ տասը հազար (10,000) ռուբլու տոկոսաբեր թղթեր թողեց:

Նա կանգնում էր մի մեծ եկեղեցու դրան, եւ ապրում էր չարդաղում:

Մի ուրիշ մուրացկան եւս Կիեւում քարէ տուն ունէր, իւր աղջկան պսակելիս՝ տունը եւ տասնեւհինգ հազար ռուբլի օժիտ տուեց:

Այսպիսի օրինակներ շատ կան եւ զարմանալի չեն:

Այսպիսի մարդիկ կարող են շատ վաստակել եւ շատ քիչ ծախսել, որովհետեւ կերակուրը զանազան խանութներից են մուրում եւ ապրում են աղտոտ ու խեղճ անկիւններում:

Նատ անգամ տնտեսական ու քաղաքական պատճառներից, օրինակ՝ սովից, անասունների սատակումից, պատերազմից եւ այլն առաջացած պատահական ժամանակաւոր մուրացկանութիւնն արհեստ է դառնում, որովհետեւ ժողովրդի բարոյական հասկացողութիւնների մակերեւոյթը շատ ստոր է լինում, անխտիր ողորմութիւն է տրվում եւ մասնաւոր բարեգործութիւնը պակասում:

Կան նոյն իսկ որոշեալ օրեր, երբ ողորմութիւն տուողներն աւելի առատաձեռն են լինում, օրինակ՝ շաբաթ ու կիւրակի օրերը. ողորմութիւն են տալիս նաեւ հարսանիքի, հոգեհանգստեան, մահուան ժամանակ եւ առհասարակ տներին:

Մի հարուստ մեռնելիս կտակով մուրացկաններին տասն եւ հինգ հազար ռուբլի հրամայեց տալ:

Փողերը բաժանելու ժամանակ հանգուցեալի տանն այնքան մուրացկաններ հաւաքուեցան, որ ոստիկանութեան ճնշեցին, եւ ոտքի տակ ձգեցին

իրանցից շատերին. փողերը ստանալուց յետոյ նրանք լաւ քէֆ սարքեցին. այնպէս որ ոստիկանները մեծ դժուարութեամբ կարողացան նոցա հանգստացնել:

Բոլորովին արդարացի են այն բազմաթիւ խիստ բողոքները, որ լսվում են այս տեսակ անխորհուրդ ողորմութիւն տալու դէմ:

Կատարելապէս ճշմարիտ է այն խօսքը, թէ ամէն մի հասարակութիւն այնպիսի յանցաւորներ ունի, որոնց ինքն է արժանի:

Հասարակութիւնը ինքն է մեղաւոր, որ մինչեւ այժմ այսպիսի բարոյական հաշմանդամներ, մուրացկանութիւնն արհեստ դարձնող մարդիկ ունի:

Եւ այսպէս տեսնում ենք, որ կեանքն ինքնին ստիպում է մեզ կռուելու մուրացկանութիւնն արհեստ դարձնող մարդկանց դէմ, որոնք ամէն տեսակ յանցանք գործելու ընդունակ են:

Իւրաքանչիւր քաղաքակրթուած հասարակութեան բարոյական պարտքն է, որ չթողնէ աղքատ մարդկանց սովամահ մեռնելու, եւ այդ պատճառով անհրաժեշտ է մեծ ուշադրութեամբ աղքատութեան պատճառներն ուսումնասիրել եւ առաջն առնող համապատասխան միջոցներ գործադրել:

Այն ամէն դէպքերում, երբ որ եւ է անհատ անկարող է իւր ուժերով ու միջոցներով ապահով կեանք ստեղծել, առանց որի զարգացումն անկարելի է, այնպիսուն օգնութեան պէտք է հասնի ուրիշների գործակցութիւնը:

Դիտութիւնը նայում է կարիքի վերայ իբրեւ մի հասարակական երեւոյթի վերայ, իսկ մասնաւոր բարեգործութիւնն ուշադրութեամբ դիտում է իւրաքանչիւր կարօտեալի անհատական առանձնայատկութիւնները:

Մասնաւոր բարեգործութիւն ասելով հասկաց-

վում է կարօտեալներին օգնելու մի այնպիսի եղանակ, որ մասնաւոր մարդկանց կողմից արտայայտվում է քիչ թէ շատ կազմակերպուած ձեւով, եւ գոնէ անխտիր ողորմութիւն տալու վատ սովորութիւնը վերցնում է:

Հասարակութիւնը ինքը պէտք է օգնէ իւր կարօտեալներին:

Անգլիայի առաջին մտածողներից մէկը այն սկզբունքը քարոզեց, թէ կանոնաւոր կերպով իրապէս աղքատներին օգնելը՝ գործ չունեցողներին գործ տալու մէջ է, որպէս զի անգործները՝ արու մեղուների պէս ուրիշի աշխատանքով չապրին:

Այդ ժամանակից «աշխատանք ողորմութեան փոխանակ» գաղափարը սկսեց քիչ-քիչ արմատ ձգել հասարակութեան գիտակցութեան մէջ. աշխատանքի ընդունակ մարդկանց՝ փողով օգնելու տեղ՝ սկսան կարելիին չափ կանոնաւոր գործ տալ:

Ինչպէս արդէն ասել ենք, աշխատանքի պակասութեան դէմ կարելի է կռուել գործ գտնելով:

Գործ տալով՝ աշխատել չցանկացողներին կըն տելացնենք այն բանին, ինչից որ նոքա խուսափում են, այսինքն՝ աշխատանքին, որ մարդուս պատուաւոր ու ապահով կեանքի գրաւականն է:

Անիմաստ չեն այն խօսքերը, որ ասում է յայտնի գիտնական Կոնին՝ բախտի յանձնուած ընկեցիկ մանուկների նկատմամբ:

«Երեխաներ—ահա այն փափուկ նիւթը, որ կեանքի յայտնի հանգամանքների ազդեցութեան տակ առողջաբար աշխատանքից ապագային մերժվում է»:

Ահա այդ աշխատանքից տարամերժուածներին՝ աշխատանքով օգնութիւնը պէտք է ժամանակին նեցուկ լինի, խնամք տանելով դաստիարակութեան եւ պատրաստելով նոցա աշխատանքով օգնելու գործին:

Ահա այն խնդիրները՝ որոնցով պէտք է զբաղուի աշխատանք տալով օգնող հաստատութիւնը:

Աշխատանքով օգնելու ջանքերն իրագործվում են զանազան հիմնարկութիւնների միջոցով. ոմանց սկզբունքն է ստիպողական աշխատանքը. իսկ միւսների՝ կամաւոր աշխատանքը:

Առաջին տեսակի հիմնարկութիւններն այնպիսի մարդկանց հետ գործ ունին, որոնք աշխատանքից փախչում են—օրինակ՝ թափառականների, մուրացկանների հետ եւ այլն (գիւղատնտեսական գաղութներ ստիպողական աշխատանքով):

Երկրորդ տեսակի հիմնարկութիւններն նշանակուած են աշխատող ժողովրդի կենցաղը բարելաւելու համար, այն մարդոց համար, որոնք կամաւորապէս աշխատանք են որոնում:

Այսպիսի նպատակ ունին աշխատանոցները, գիւղատնտեսական գաղութները կամաւոր աշխատանքով եւ այլն:

Այստեղ առանց աշխատանքի մնացած բանուորները օգնութիւն են գտնում եւ դրանով ազատվում են մուրացկանութիւնից եւ շատ յաճախ բանդից. այստեղ խնամվում են այն յանցաւորները, որոնք թէեւ կրել են իրանց պատիժը, բայց իբրեւ արատաւոր հասարակութեան առաջ՝ աշխատանք չեն գտնում:

Այստեղ ապաստանարան են գտնում նոյնպէս «հասարակական խառնուածքի զոհերը»—կին կամ օրիորդ, որոնք արդէն անառակութեան լպրծուտ ճանապարհի վերայ են՝ գայթակղութեան, տգիտութեան, թեթեւամտութեան, կարիքի եւ այլ այսպիսի պատճառներով:

Այս բոլոր մարդիկը կամաւորապէս այստեղ են գալիս, եւ այդ հիմնարկութիւնը կարելիին չափ լայն բաց է անում իւր դռները նոցա առաջ:

Կամաւոր աշխատանքի սկզբունքով են շինուած եւ այն հիմնարկութիւնները, որոնց նպատակն է աշխատանքով դաստիարակելը, եւ այդ պատճառով հիմնուած է երեխաների համար. այդ բանը կատարվում է արհեստանոցներում, մանկական աշխատանոցներում, մանկահասակների համար հիմնուած գիւղատնտեսական գաղութներում:

Երեխաների համար հիմնվում են ուսումնարաններ սկզբնական կրթութիւն տալու համար, այդպիսով արհեստագիտական կրթութեան հետ մանուկները ստանում են եւ մտաւոր ու բարոյական կրթութիւն. դոցա սովորեցնում են ուշադիր լինել, ճշդապահ ու մտացի. նոյն իսկ մանր բաներին նշանակութիւն տալ, նիւթեր ճանաչել, եւ այս կամ այն առարկայի կեանքի մէջ պիտանի լինելը իմանալ, մի խօսքով՝ ընդլայնում են նոցա մտաւորական հորիզոնը:

Աշխատանքով օգնելն ա՛յլ տեսակ օգնութիւններից այն առաւելութիւնն ունի, որ ժողովրդին չի անբարոյականացնում:

Նա իրան դիմողին առանց նպաստի չի թողնում, բայց միեւնոյն ժամանակ այդ նպաստը տրվում է աշխատելու պայմանով, որը մի կողմից այդպիսի մարդուն ապահովելու ծախքերն է սակաւացնում, իսկ միւս կողմից էլ բարոյապէս ազդում է կարօտեալի վրայ, թոյլ չտալով, որ ծրիակեր դառնայ, եւ միեւնոյն ժամանակ սովորեցնում է նրան ինքնուրոյն աշխատանքով ապրելու:

Աշխատանքով օգնելու սկզբունքը շատ վաղուց յայտնի է, այս նպատակով սկզբում հասարակական աշխատանքներ էին կատարվում:

Բազմադարեան փորձը ցոյց տուեց, որ հասարակական աշխատանքները, իբրեւ ամենաբարդ գործ, շատ անյարմարութիւններ են ներկայացնում պատ-

շաՀ կերպով ու ընդարձակ չափով օգնելու նկատմամբ:

Աւելի լաւ պայմանների մէջ կարելի է դնել աշխատանքով օգնելու գործը Հողագործական գաղութներում, որոնք առանձնապէս նշանակութիւն ունին գիւղացի կարօտ դասակարգի եւ ուրիշ ցանկացողների Համար:

Այդպիսի ազատ գաղութ առաջին անգամ Հիմնուեցաւ Հոլանդիայում:

Բաժանորդութեամբ յայտնի գումար Հաւաքեցին, եւ Հող գնեցին ու մասերի բաժանեցին, որոնց ամէն մի մասի մէջ մի տուն կայ:

Մաս ստացողը տունը վերանորոգում է, Հողը մշակում է կա՛մ իւր սեփական փողով եւ կամ թէ գաղութի Հաշուով:

Այն փողերը՝ որոնք գաղութի բնակիչների ձեռքը չեն տրվում, սնունդ ու Հագուստ բարւոքելու Համար են ծախսվում:

Թէ մէկը եւ թէ միւսը գաղութի խանութներում են ծախվում, թէեւ կարելի է եւ դրսից գնել:

Գաղութի մէջ Հետեւեալ կերպով կարելի է ընդունուել:

Իւրաքանչիւր կարօտեալ, որ աշխատելու ընդունակ է, այսինքն՝ Հիւանդ չէ, գաղութ է գալիս, որտեղ նորան ծանօթացնում են գաղութի ներքին կազմակերպութեան Հետ, եւ տեղաւորում են ընդՀանուր բնակարանի մէջ. եթէ ցանկացողն ընտանիքի տէր է, այն ժամանակ նրան առանձին տուն են տալիս:

Սեռը, Հասակը եւ ընդունակութիւններն որոշում են, թէ ի՛նչ բան եւ ինչպիսի աշխատանք կարող է նորեկը կատարել:

Բացի դաշտերի ու բանջարանոցների մշակու-

թեան գործից՝ գաղութներում կան եւ հիւսնութեան, տոպրակ կարելու, դարբնութեան, կողովներ հիւսելու արհեստանոցներ, պտուղներից, բանջարներից բունդակներ (կոնսերվ) եւ իւղ ու պանիր պատրաստելու գործարան:

Ի միջի այլոց կողովները շատ են ծախվում, եւ լաւ վաստակ են տալիս:

Գաղութի բարերար ազդեցութիւնը բնակիչների բարոյականութեան, յատկապէս թոյլ բնաւորութիւնների վերայ՝ շատ մեծ է. քաղաքի գինետներից հեռու լինելով՝ հեռու են մնում նաեւ ալքոհոլզմից եւ ուրիշ ախտերից:

Աշխատանքով օգնելը նեղ մտքով վերցրած՝ այսինքն կարօտեալին օգնել՝ ժամանակաւորապէս գործ տալով կատարվում է աշխատանոցների մէջ:

«Ցուսով եմ, որ մեր ամբողջ Ռուսաստանում կը գտնուին լուսաւոր գործիչներ, որոնք պատրաստ կը լինին անձնազոհութեամբ ծառայելու այս ինձ համար թանկագին գործին»:

Այս անմոռանալի խօսքերն ասաց թագուհին 1895 թ. Սեպտեմբերին, երբ բարձրագոյն հաստատուեցաւ թագուհի կայսրուհի Ալեքսանդրա Ֆէոդորովնայի հովանաւորութեան տակ աշխատանոցների հոգաբարձութեան կանոնադրութիւնը:

Ահա մեծ գործ, ո՞ւր են գործիչները, ո՞րտեղ են մեր հայրենիքի ճշմարիտ քաղաքացիները:

Ահա եւ աշխատանոցները:

Այդ տները Ռուսաստանում հիմնում են բարեգործական ընկերութիւնները, որոնք յայտնի են «աշխատանոցների հոգաբարձական ընկերութիւններ» անունով եւ ունին որոշ ծրագիր:

Ամէն մի աշխատանոց պէտք է ըստ կարելւոյն կարճ ժամանակով օգնութիւն տայ անտուն մարդոց,

հիւանդանոցից նոր դուրս եկող ու անգործ մնացողներին, բանդից արձակուածներին եւ առհասարակ ծայրայեղ աղքատներին՝ տալով աշխատանք ու ապաստանարան՝ մինչեւ որ նոցա վիճակը հաստատ կերպով բարւոքուի:

Այս նպատակին կատարելապէս հասնելու համար՝ ընկերութիւններն իրաւունք ունին աշխատանոցներին կից շինելու իբրեւ օժանդակիչ հիմնարկութիւններ՝ ճաշարան, գիշերանոց, մսուրներ երեխաների համար աշխատանքի ապաստանարան, գործ գտնելու միջնորդ—գրասենեակ եւ այլ համապատասխան հիմնարկութիւններ:

Տների հասոյթները կազմում են զանազան նուիրատուութիւններ եւ առհասարակ բարեգործական հիմնարկութիւններին քիչ թէ շատ սովորական աղբիւրները. այն մարդիկը, որոնք միանուագ հազար ռուբլուց ոչ պակաս են նուիրում, կամ թէ չէ տարեց տարի հարիւր լուբլուց ոչ պակաս են տալիս, աշխատանոցների հոգաբարձութեան «բարեգործ անդամի» կոչումն են ստանում, եւ այդ կոչումը հաստատում է հոգաբարձութեան Օգոստափառ Հովանաւորը:

Աշխատանոցի գործերը կառավարում են 1) հոգաբարձուն 2) ընկերութեան վարչութիւնը եւ 3) անդամների ընդհանուր ժողովը:

Կանոններն ու ծրագիրը փոփոխվում եւ կամ լրացվում են տեղական պայմանների համաձայն:

Աշխատանոցների վարչութիւնն այդ գործին մասնակցելու հրաւիրում է տեղական բժիշկներին, որոնք պարբերաբար եւ կարելիին չափ յաճախ տներն են այցելում:

Բժշկի պարտականութիւնն է 1) նոր մտնողներին քննել, եթէ նոցա ընդունուելու նկատմամբ որ եւ է կասկած կայ, 2) բժշկական օգնութիւն հասցնե-

աշխատանոցի մէջ եղածներին. 3) առիւսարակ իսկել աշխատանքի ու առողջապահական պայմանների վերայ:

Ամէն մի մտնող նախապէս գնում է բաղնիս. նորա շորերն առնում, ախտահանում են եւ մաքուր հանդերձ են տալիս:

Բոլոր խնամուողները գոնէ շաբաթը մի անգամ բաղնիս են գնում:

Օդը մաքուր պահելու համար, աշխատանքները կատարվում են առանձին արհեստանոցներում եւ ոչ թէ այն սենեակներում, որտեղ նոքա քնում են. աշխատելու ժամանակ արգելվում է ննջարան մտնել, եւ ննջարանն այդ ժամանակ օդափոխութեան է ենթարկվում:

Բոլոր աշխատանքներից գերադասում են այն՝ որ թարմ օդի մէջ է կատարվում, որովհետեւ առողջութեան վերայ լաւ է ազդում (այս կանոններն առիւսարակ շատ օգտակար են ամէնքի համար էր):

Այս նպատակով բանջարանոցներ, պարտէզներ են ձգում եւ այլն:

Աշխատանք ընտրելիս՝ գերադասում են ֆիզիքականը, որ ուժերը լարելով բարերար ազդեցութիւն է գործում:

Աշխատանքն այնպիսի հիմունքներով է կազմակերպվում, որ խելացի ու օգտակար լինի:

Այնպիսի աշխատանք են ընտրում, որ դատարկութեան սովոր մարդոց հետաքրքրէ ու գրաւէ, եւ նոցա սէրը չսառեցնէ ծանր ու տապակալից լինելով:

Աշխատանքը կազմակերպվում է այնպիսի սկզբունքների հիման վերայ, որ ոչ մի արհեստ չգիտցողը արհեստ սովորի, եւ ադով ապագային տպրուստի միջոցներ ձեռք բերէ:

Ուշադրութիւն են դարձնում, որ աշխատանոցնե-

ի աշխատանքը միւս բնակիչների գործին չվնասէ:

Աշխատանոցների մէջ պատրաստում են այնպիսի առարկաներ, որ գին ունին, որոնց վաճառումով կարելի լինի ծախքերը ծածկել:

Ցանկալի չեն թանկ իրեր, եւ թանկ նիւթերից շինուած բաներ:

Հասակաւորները տասն եւ մէկ ժամից աւելի չպէտք է աշխատեն. իսկ փոքրահասակները ութը ժամ միայն:

Բարոյականութեան տեսակետով՝ բնակարաններ-ի մէջ տղամարդիկ առանձին են ապրում, հասակաւորներն էլ՝ երեխաներից բաժան:

Բոլորն էլ մասնակցում են ամէնօրեայ աղօթքներին, եւ եկեղեցի են յաճախում:

Աշխատանքից ազատ ժամերին նոցա համար սարքում են ընթերցումներ, եւ աշխատանոցներին կից գրադարաններ են հիմնում:

Վարչութիւնն աշխատում է կարօտեալներին դրանից դուրս զբաղմունք գտնել, եւ նոցա տեղ է տալիս:

Եթէ մէկի անցագրի ժամանակը լրացել է, կամ անցագիր չունի, նորը ստանալու հոգսը աշխատանոցների վարչութիւնն է քաշում՝ բանուորի հաշուով:

Աշխատանոցների մէջ կարելի է մնալ ամենաքիչը ութը օր, բայց մտնողն իրաւունք ունի աւելի կանուխ դուրս գալ այն պայմանով միայն՝ որ իւր վերայ եղած ծախքերը հատուցանէ:

Կարօտեալը կարող է մնալ աշխատանոցի մէջ վեց ամիս:

Որովհետեւ այս տների նպատակն է 'ի միջի այլոց հեռու պահել մարդոց մուրացկանութիւնից՝ որի մէջ ընկնում են դատարկասիրութեամբ ու հարբեցողութեամբ, ուստի աշխատում են մարդոց

բարոյական, ժուժկալ ու աշխատաւոր դարձնել:

Վերջապէս այս տներում մատեաններ կան, որոնց մէջ արձանագրվում են մտնողների անունները, նրանց կատարած աշխատանքները, կտակները, դասոյթներն ու ծախքերը եւ այլն:

Կերակուրը պէտք է թարմ լինի, խառն (կանաչեղէն, կաթնեղէն եւ նոյն իսկ միս) ու սննդարար. կատարեալ մաքրութիւն, կարգ ու կանոն պէտք է լինի ամէն բանի մէջ, եւ կատարուած աշխատանքը բարեխեղճ:

Կարեւորութեան դէպքում տան մէջ ընտրվում է տանուտէր, կարգով նշանակվում է եւ դերթապահ:

Դրանց պարտքն է՝ սենեակները ժողոտել, վառարանները վառել եւ առհասարակ հոգ տանել տան մաքրութեան ու կարգապահութեան վերայ:

Առհասարակ ընկերութեան վարչութիւնն ու վերակացուն արդարամիտ ու բարի պէտք է լինին աշխատաւորների վերաբերմամբ. 'ի նկատի պիտի առնեն, որ իրանց վարմունքով ոչ թէ սատրացնեն, այլ ընդհակառակը մարդկային արժանաւորութեան զգացում զարթեցնեն նոցա մէջ:

Խնամուողների համար եւս կանոններ կան:

Առաւօտ վեր կենալիս՝ ամէն մարդ հաւաքում է, իւր անկողինը եւ լուացվում է. ապա ամէնքը գնում են աշխատելու. աշխատանքի ժամանակ ննջարանում մնալ, անկողնում պառկել կարելի է միայն վերակացուի առանձին թոյլատրութեամբ:

Արգելվում է կեղտոտել ու փճացնել յատակը, պատերը եւ այն բոլոր առարկաները, որոնք տան սեփականութիւն են կազմում:

Արգելվում է ձեռք բերել պահելու եւ գործածելու համար օղի եւ ուրիշ ոգելից խմիչքներ եւ նոյնպէս ազատ ժամանակ ծխել:

Արգելվում է աղմուկ հանել, անպարկեշտ երգեր երգել ու խօսքեր արտասանել:

Վարձը օրական ու շաբաթական է այն սակագնի համաձայն, որ վարչութիւնն է որոշում:

Աշխատանոցի մէջ վաստակած փողը բանուորի ձեռքը չեն տալիս, այլ նորա անունով մտցնում են մատեան, եւ յետոյ միայն տալիս են բոլոր ծախսերը հանելով:

Անհնազանդների համար զանազան պատիժներ կան:

Աշխատանոցները երթեւեկողների համար եւս, որոնք գալիս են միայն աշխատելու, համարեա միեւնոյն կանոններն ունին:

Ինչպէս ասացինք, այդ տների բնակիչները կազմում են մի կողմից ֆիզիքական աշխատանքով ապրող մարդիկ, բայց ժամանակաւոր եւ կամ քրոնիկական հիւանդութիւնից տկարացած, իսկ միւս կողմից էլ ֆիզիքապէս աշխատելու անկարող ու ապիկար մարդիկ:

Ճիշդն ասած՝ հէնց այս տեսակ աշխատաւորներից եւ կամ աւելի ճիշդը կիսատ-աշխատաւորներից կազմուած պէտք է լինին աշխատանոցների բնակիչները, որոնց համար եւ յատկապէս այդ տները շինվում են:

Այս տեսակ մարդկանց աւելի դժուար է մշտական աշխատանք գտնելը, դժուար է յարմարուել ժամանակակից արդիւնաբերութեան պահանջներին, եւ նոքա գործից զրկուելով՝ միանգամայն զրկվում են եւ ապրուստի միջոցից. եւ շատ դժուարութեամբ կարողանում են նորից զբաղմունք գտնել:

Այսպիսի մարդիկ ի բնէ ընդհանրապէս շատ լաւ են լինում, այդ պատճառով էլ նոցա օգնել անհրաժեշտ է:

Եթէ ֆիզիքապէս թոյլ են, աշխատանոցը թեթեւ աշխատանք պէտք է տայ նոցա, եւ ժամանակ՝ կազդուրուելու ու ամրանալու:

Եթէ ֆիզիքական աշխատանքի անընդունակ են, նոյն տունը պէտք է աստիճանաբար սովորեցնէ եւ աշխատելու ընդունակ դարձնէ:

Նատ ցանկալի է ու անհրաժեշտ, որ այստեղ աշխատել ցանկացողը ստանայ միեւնոյն ժամանակ ապաստանարան ու կերակուր:

Կան նաեւ փնացած, թուլաբարոյ ու մեղկ մարդիկ:

Դոքա կեանքի շէմքից դուրս շպրտուած ալքոհոլիկներ են, քայքայուած, ապականուած կեանքով, կամ թէ ներկայացնում են այլասերման պարզ օրինակներ:

Այդ հիւանդ տարրը պահանջում է ո՛չ թէ աշխատանքով օգնելու բարեգործական հիմնարկութիւններ, այլ՝ խօսքի իսկական նշանակութեամբ բուժարաններ, եւ ուղղիչ ու դաստիարակիչ հիմնարկութիւններ:

Նոցա համար հարկաւոր է ո՛չ թէ կամաւոր աշխատանք՝, որին երբեք հակուած չեն, եւ անընդունակ իսկ են, այլ բուժիչ միջոցների-առողջապահութեան, մանկավարժութեան ու կարգապահութեան-պարբերական ազդեցութիւն:

Եւ հարկաւոր չէ մոռանալ, որ աշխատանոցները անկելանոցներ չեն:

Վերջապէս աշխատանոցների բնակիչների մի մասը կազմում են երեխաներ:

Ներկայումս կարելի չէ նոցա իբրեւ աշխատաւոր համարել. միայն ապագային կարող են նոքա աշխատաւոր դառնալ:

Այդ պատճառով երեխաների համար եղած աշխատանոցները պէտք է ուսումնական-կրթական

հաստատութիւններ լինին, նպատակ ունենալով իրանց սանիկներին ապագային օգտակար աշխատաւորներ դարձնել:

Ահա գործունէութեան եւ մի այլ արդիւնաւէտ ասպարէզ Ճշմարիտ քրիստոնեայի համար:

Եռանդուն ցանկութեան ու կարողութեան շնորհիւ այս բոլորը կարելի է իրագործել:

Ամէն մի կառավարութեան համար այս ամէնը կարեւոր խնդիր է. եւ շատ բաւական կը մնայ կառավարութիւնը, երբ հասարակութեան մէջ չլինին իսպառ Ճնշուածներ ու անբախտներ. մանաւանդ երեխաներից: *)

Լ.

ՈՒՍՈՒՄ ԵՒ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ.

Լուսաւորութեան գործօնները շատ բազմաթիւ ու բազմատեսակ են:

Աշխատող ժողովրդի համար ամենանշանաւոր-

*) ԾԱՆՕԹ. Քանի որ մեր մէջ դեռ այսպիսի կազմակերպուած աշխատանոցներ չկան, աղքատներ կարելի է խնամել հետեւեալ կերպով: Իւրաքանչիւր եկեղեցու ծխից ցանկալի է, որ օրիորդներ ու տիկիններ ընտրուին եւ քաղաքն որոշ մասերի բաժանուի: Օրիորդները պէտք է շրջեն աղքատների տները, եւ նոցա վերաբերմամբ հետեւեալ տեղեկութիւնները հաւաքեն. 1. Ո՞վ է. 2. Քանի՞ տարեկան է. 3. Ի՞նչ է պարապմունքը 4. Գրագէ՞տ է արդեօք. 5. Ո՞րքան զաւակ ունի. 6. Ի՞նչ գործ է կատարում եւ ո՞րքան վաստակում. 7. Ունի՞ ազգականներ. 8. Ո՞րքան վաստակ կամ արդիւնք ունի. 9. Մուրացկանութիւն չի՞ անում. 10. Ի՞նչ պատճառով վաստակը դադարել է. 11. Ի՞նչպէս է առողջութիւնը. 12. Ի՞նչ է խնդրում: Երբ այս եւ այլ սրա նման տեղեկութիւններ ժողովուին, այնուհետեւ միայն բարեգործական ընկերութիւններից դրամական նպաստ եւ կամ աշխատելու գործ կարելի է տալ:

ներն ու ամենայարմարներն են առհասարակ ուսումնարանները եւ մասնաւորապէս երեկոյեան ու կիրակնօրեայ դպրոցները, կրկնողական կուրսերը, գրադարանները, ընթերցարանները, հասարակական ընթերցումները, գրքեր տարածելը եւ այլն:

Դժբախտաբար այս բաների նկատմամբ շատ արգելքներ կան:

Ժամանակը չի համբերում, իսկ շուրջը մտաւոր ու բարոյական աղքատութիւն է տիրում:

Տնտեսական դրութեան բարւոքումը եւ կրթութեան լայն տարածումը կարող են նպաստել, եթէ ոչ արմատախիլ անել, գոնէ նշանաւոր չափով տկարացնել, առաջն առնել աղքատութեան ու զանազան ախտերի:

Մասնաւոր մարդոց ու մասնաւոր նախաձեռնութեան ժողովրդական լուսաւորութեան գործին մասնակցելը վերջնականապէս վճռուած է, եւ Անգլիայում ժողովրդի լուսաւորութիւնը համարեա ստեղծուել է մասնաւոր նախաձեռնութեան շնորհիւ, իսկ ուրիշ տեղերում այդ նախաձեռնութիւնը փակուած է նեղ շրջանի մէջ:

Բայց ոչ մի ժամանակ եւ ոչ մի տեղ բոլորովին չէ ոչնչացած:

Միշտ եւ ամէն տեղ տարրական կրթութիւնն ու լուսաւորութիւնը որ չափով որ պետական է, նոյն չափով էլ անձնական ու ընտանեկան է:

Գրագիտութիւնն ու տարրական կրթութիւնը, իբրեւ գիտութեան ամենազօրեղ գործիքներից մէկը, արդարացի կերպով կոչվում են մարդու վեցերորդ զգացմունքը:

Տարրական կրթութիւնը յեսոյ կարող է զօրանալ ու ընդլայնիլ գրքերի ընթերցմամբ. պէտք են գրադարաններ ու ընթերցարաններ:

Ամէն կառավարութիւն կարող չէ լուսաւորութեան գործոնները տեղական պայմաններին յարմարացնել. միշտ այդ պայմաններից կախումն ունենալով՝ կարող չէ նրան այս կամ այն օգտակար ուղղութիւնը տալ, ինչպէս եւ բարեգործութեան մէջ. լուսաւորութիւն տարածելու հոգսերն այնքան անհատականացնել, որ ուսումնարանը կեանքին իւր տեղական բոլոր պահանջներով մօտենայ:

Այս հիման վերայ պետութիւնը յայտնի վստահութիւն է ցոյց տալիս հասարակական ուժերի վերայ, եւ նոցա նախաձեռնութեան է տալիս այդ տեսակ գործերը:

Այսպիսի մեծ գործի մէջ վստահելն՝ հասարակական ուժերն առաջ քաշելու ամենալաւ միջոցն է:

Անհնշան վստահութեան ժամանակ իսկ ճշմարտութիւնը վերջապէս իւր իրաւունքների տերը կը լինի, իսկ պետութեան համար ինչքան շատ օգտակար ու մաքուր գործիչներ լինին, այնքան էլ լաւ է:

Դժբախտաբար մեր հասարակութիւնը միշտ իւր յոյսը դնում է կառավարութեան վերայ. ապաքէն կառավարութիւնն էլ շատ գործ ունի, բայց եւ այնպէս կամաց-կամաց ամէն տեղ ուսումնարաններ է բաց անում:

Մենք շատ դժբախտ եղբայրներ ունինք Պարսկաստանում եւ Թիւրքիայում, որտեղ մատով կարելի է համրել ուսումնարանները:

Օրինակ Պարսկաստանում հարիւր գիւղին ընկնում է մի ուսումնարան. ի՞նչ դժբախտութիւն եւ ի՞նչ վիշտ:

Ահա լայն գործունէութեան վայր մեր հարուստների համար՝ Պարսկաստանը, որտեղ նահը նոյն իսկ իւր հովանաւորութեան տակ է առնում ուումնարանները, եւ ուր կարող են մեր հարուստները ցոյց

տալ, որ ժամանակակից մարդիկ են, եւ հասկանում են քաղաքակրթութեան ուժը:

Այնտեղ հիմնել չորեքդասեան ուսումնարաններ արհեստագիտական ու գիւղատնտեսական բաժիններով, եւ նոյնպէս քաղաքներում աշխատանոցներ ամէն բաժանմունքներով-ահա կատարելու գեղեցիկ գործեր:

Աւելի լաւ է այդ բոլորն անել կենդանութեան ժամանակ, գնալ, անձամբ ծանօթանալ տեղական պայմաններին կամ թէ չէ ուղարկել տեղեակ ու մասքուր մարդիկ:

Ի՜նչ մեծ բարոյական բաւականութիւն:

Քի՞չ կան եւ ուրիշ գործեր. ահա հրատարակչական ու գրքեր տարածելու գործը:

Իւրաքանչիւր մարդ փողերի մի մասը պարտաւոր է տալ այդ ճշմարտապէս օգտակար ու արդիւնաւէտ գործին:

Միայն ցանկութիւն լինի, ամէնքի համար էլ բաւականին գործ կայ կատարելու:

Լուսաւորութիւն տարածող հիմնարկութիւններին իւր նշանակութեամբ մօտ է եւ «ժողովրդական զուարճութիւնը»:

Մի քանի տարի առաջ Պետերբուրգի բանուորներն այսպէս կոչուած «Նեվսկի զաստավայից» այն կողմ ուրիշ զուարճութիւններ չէին ճանաչում, բացի փողոցում թափառելուց, գինետներ յաճախելուց, որ այնքան շատ կայ այդ տեղում:

Կեղտոտ, հոտած ու սաստիկ խռնուած բնակարանները բանուորներին ստիպում էին դուրս գալ այն տեղերից:

Տօներին զարթնում էր նա փողոցում, ծախսելով խումի վերայ իւր բոլոր աշխատած փողը:

Երիտասարդութիւնը դաշտ էր դուրս գալիս,

եւ բռնակռիւ էր սարքում, որ յաճախ վերջանում էր ծանր կռիւներով:

1885 թուին երկու պարոնների նախաձեռնութեամբ կազմուեց տեղական ինտելիգէնտներից մի խումբ, որի նպատակն էր տօներին ժողովրդական զբօսանքներ ինարել բանուորների համար:

Այդ խմբակը հաւաքեց ստորագրութիւնով 1800 ռուբ. ժամանակաւորապէս մի հրապարակի վրայ շինեց փոքրիկ բեմ ներկայացումների համար, հսկայական քայլեր, ճօճանակ եւ այլն. դրեց այնտեղ մի քանի սեղան ու աթոռ, եւ ժողովրդի համար պարտէզ բացեց՝ առնելով մուտքի համար 10 կոպէկ:

Պարտէզում ածում էր զինուորական երաժշտութիւն, երգում էր զինուորների խումբը (կարելի է սիրողներից կազմել թէ խումբ եւ թէ երաժշտութիւն), կային կլոուններ, մարմնամարզներ, պատմիչներ եւ կուպլէդ ասողներ. տրվում էին փոքրիկ խելացի կոմեդիաներ, վոդեւիլներ եւ պանտոմիմ:

Բուֆէդում թունդ խմիչքներ չլինելը բոլորովին վայելուչ տեսք էր տալիս զբօսանքին, չկար ոչ կռիւ, ոչ հայհոյանք եւ ոչ էլ ծեծ, եւ գինետները դատարկուեցան:

Ընտանեբար թէյ խմելով, երաժշտութիւն լսելով, կոմեդիա տեսնելով սրտով բանուորները գոհ՝ գնում իրանց տները:

Ցաջողութիւնը մեծ էր, հաճելին օգտակարին հետ միացած:

Վեց տարուց յետոյ այդ խումբը դառնում է ժողովրդական զուարճութիւններ սարքող «նեվսկի ընկերութիւն», որի կանոնադրութեան մէջ ասուած է՝ «մատակարարել տեղական բանուորներին բարոյական ու էժան զուարճութիւններ, ինչպէս ժողովրդական զբօսանքներ, ընթերցումներ, համերգներ, ներ-

կայացումներ, պարերեկոյթներ եւ այլն:

Ընկերութիւնն առեւտրական նպատակներ չունի, այլ ձգտում է էժանացնել եւ մատչելի դարձնել իւր սարքած զուարճութիւնները:

Ընկերութեան միջոցներն են՝ 1) ընկերութեան անդամների վճարները, 2) մուտքից գոյացած գումարը եւ 3) նուիրատուութիւններ:

Ընկերութեան գործերն այնքան լաւ գնացին, որ նա սեպհական թատրոն սկսեց հիմնել:

Այդ բանը հեշտ չէր, բայց ընկերութիւնը իւր կենսունակութեամբ յաջողեցաւ ժողովրդական թատրոն հիմնել, որ արժէ, չզարմանաք, 150,000 ռուբ.:

Աւելորդ է աւելացնել, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի խելացի զուարճութիւնները ժողովրդի կեանքի այլանդակ երեւոյթների դէմ կռուելու մէջ, որ նորա տնտեսական բարօրութիւնն ու արտադրելու ուժն են քայքայում, ինչպէս եւ այն, թէ ո՞րքան բան կարող է անել մի մասնաւոր նախաձեռնութիւն այդ գործում:

Այդ ճանապարհով թող գնան ժողովրդական ժուժկալասէր հոգաբարձութիւններն ու քաղաքային ինքնավարութիւնները:

Պէտք է յուսալ, որ աշխատանքով օգնելու ընկերութիւնների զարգանալովը՝ ժողովրդի համար խելացի զուարճութիւններ սարքելու գործն աւելի եւս առաջ կերթայ, եւ այն էլ լայն կերպով կը տարածուի:

Պէտք է աշխատանք, եւ ոչ մի խելացի աշխատանք ի զուր չի կորչիլ:

Նոյն իսկ Պարսկաստանը իւր դռները լայն բաց է անում ժողովրդի բարօրութեան համար, եւ մեզ համար էլ նոր ասպարէզ է բացվում մեր դժբախտ ժողովուրդը լուսաւորելու համար:

Է.

ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԻՒՆ.

Մինչեւ այժմ մենք քննեցինք աշխատանքով օգնելու այն եղանակները, որոնց վերջնական նպատակն է ընդլայնել ու ընդարձակել աշխատաւոր կեանքը, եւ նրան արգելառիթ պարագաների առաջն առնել:

Բայց աշխատաւոր կեանքը ներկայ պայմաններում պահանջում է այնպիսի կազմակերպութիւն, որ աշխատաւորը հնար ունենայ ժամանակաւոր ու պատահական դժուարութիւններին դիմանալ՝ առանց տնտեսական կորուստի. եւ առհասարակ առանց կրելու այնպիսի տնտեսական ու ֆիզիքական զրկանքներ, որոնք սովորաբար աշխատանքով ապրելը դժուարացնում են:

Հենց այդ նպատակին են ծառայում «փոխադարձ օգնութեան» բազմաթիւ ու բազմատեսակ հաստատութիւնները:—

Սպառողների ընկերութիւն ասելով հասկացվում է մարդկանց այնպիսի միութիւն, որ մի եւ նոյն տեղից գնելով եւ սեփական խանութներ ունենալով՝ առաւել օգտակար կերպով բաւարարութիւն է տալիս իւր պահանջներին:

Այդ նպատակով սպառող ընկերութիւնները այս կամ այն առեւտրականի հետ որոշ պայմաններ են կապում, որ իրանց գնած ապրանքների մէջ զիջողութիւն անի, եւ կամ թէ հիմնում են առանձին խանութներ:

Սպառողների ընկերութիւնները մեծ զարգացումը ստացան Անգլիայում:

Այստեղ այդպիսի ընկերութեան իւրաքանչիւր անդամը միեւնոյն ժամանակ նրա բաժնետէրն է:

Օգուտը՝ դուրս հանելով որոշ տոկոս դրամագլխի ու բաժնի համար, բաժանվում է գնողների մէջ՝ նոցա գնածների համեմատ:

Բաժնետոմսերի վճարները ծանր չեն, եւ կարող են տոկոսներով լրացուել:

Դրա շնորհիւ ընկերութիւնը մատչելի է ամէն մի ցանկացողի. ընկերութեան ընդհանուր վարչութիւնը գտնվում է բոլոր անդամների ժողովի ձեռքում:

Անգլիական սպառողների ընկերութիւնները այժմ գործակից (կոոպերատիւ) դաշնակցութիւն են կազմել:

Վերջին ժամանակներս կոոպերացեան Անգլիայում ուշադրութիւն է դարձնում՝ իւր սեփական արտադրութիւնը զարգացնել ու մեծաքանակ ապրանք գնողների միջոցով:

Արդէն կան կօշիկի, հերկանաքարերի մեծ գործարաններ, պատրաստի շորերի արհեստանոցներ, օճառի գործարաններ. մինչեւ անգամ բանկ է հիմնուած:

Յետոյ սպառող ընկերութիւնների մէջ երեւան է գալիս եւ լուսաւորութեան ձգտում:

Նոքա ուշադրութիւն են դարձնում կոոպերատիւ կրթութեան վերայ, շինում են գրադարաններ, ընթերցարաններ, կազմում են դասախօսութիւններ եւ այլն:

Մեզ մօտ Ռուսաստանում էլ քիչ-քիչ առաջ են գալիս նոյնպիսի սպառող ընկերութիւններ, ինչպէս է օրինակ՝ «Գուարդիական օֆիցերների» ընկերու-

թիւնը Պետերբուրգում.

Այս տեսակ գործի զարգացման գլխաւոր կաշկանդող պարագան անկասկած մեր ժողովրդի պակաս քաղաքակրթուած լինելն է:

Պէտք է յուսալ, որ աշխատանքով օգնելու հաստատութեան զարգացման շնորհիւ՝ սպառողական ընկերութիւններն եւս կը տարածուին աւելի մեծ թուով:

Մեզանում այս բանին աւելի պահանջ կայ, քան թէ որ եւ է ուրիշ տեղում, որովհետեւ մեր աւեւտրի կազմակերպութիւնը մեծ մասամբ մանր լինելով՝ ալնտեսական մեծ վնաս է տալիս աշխատաւոր դասակարգի ամենակարօտեալ մասին, եւ ի միջի այլոց արգելք է լինում նրա նիւթական դրութեան բարւոքման:

Իսկ թէ ի՞նչպէս են ապրում մանր առեւտրականները, լաւ յայտնի է. քաղցած, նեղ ու խոնաւ նկուղներում. եւ որ եւ է անբախտութիւն կամ մահ -ընտանիքը 7-8 երեխաներով մնում է առանց կոպէկի, առանց մի կտոր հացի:

Հարիւր մանէթով կարելի է պարապել մեղուաբուծութեամբ. իսկ բանջարապանութիւնն ու պարտիզպանութիւնը արհամարհվում են:

Գոնէ կուշտ ու առողջ ես, եւ պատուաւոր կերպով աշխատելով՝ քո ճակատի քրտինքով ես հաց ուտում:

Թող մեծ ծաւալ ստանայ սպառող ընկերութիւնների գաղափարը:

Դա նպատակայարմար միջոցներից մէկն է մեր գիւղացու տնտեսական դրութիւնը բարւոքելու համար, որ ծանր ճգնաժամի մէջ է, որովհետեւ մի կողմից նորա պահանջները շատանում են, իսկ բաւարարութիւն տալու միջոցները նուազում. բայց

աւելի եւս դժուարանում է գիւղացու դրութիւնը մանրավաճառների կամայականութիւնից, որոնք անհրաժեշտ պիտոյքներն երբեք անգամ աւելի թանկ են ծախում:

Սպառողների խանութն ազատում է գիւղացուն մանրավաճառից, որ իւր դրութիւնից օգտուելով՝ վատ ապրանքներ է ծախում անասելի բարձր գնով, եւ այդպիսով յափշտակում է գիւղացու առանց այն էլ աննախանձելի բիւտժէտի մի մասն իւր օգտին:

Սպառողների խանութը գիւղացուն էժան ու լաւ ապրանք կը տայ, եւ բացի դորանից՝ կը տայ նաեւ մի որոշ տոկոս, որ տարուայ վերջը կը բաժանուի սպառողների ընկերութեան անդամների մէջ:

Քաղաքներում, ինչպէս օրինակ Թիֆլիսում, թէեւ ապրուստի անհրաժեշտ պիտոյքների վերայ հսկողութիւն կայ, բայց նոյնպէս մեծ ծաւալով ապրանքներ են կեղծվում, էլ ինչ լաւ բան կարելի է սպասել գիւղի մանրավաճառից:

Պէտք է գիտենալ, որ սպառող ընկերութիւններըն ոչ վաճառականական եւ ոչ էլ բաժանորդական ֆիմնարկութիւններ են:

Սպառող ընկերութիւնը այն մարդկանց միացումն է, որոնք ուզում են իրանց ընդհանուր պահանջներին աւելի լաւ բաւարարութիւն տալ. այն ինչ բաժանորդական ընկերութիւնը ներկայացնում է իրերի, գումարների միացում՝ որ եւ է շահի հասնելու համար:

Սպառող ընկերութիւնները վաճառականական ընկերութիւններ չեն այն պատճառով, որ ապրանք չեն ծախում շահ ստանալու նպատակով:

Անկասկած նոքա յառաջադիմութեան ամենազօրեղ գործոններից մէկն են, եւ վաճառանոցում կարող են միակ հաւասարակշռութիւն պահպանողը

լինել թէ քաղաքներում, թէ գիւղերում եւ թէ յետ ընկած տեղերում:

«Թիֆլիս» կայարանի արիեստաւորների մէջ առաջ եկաւ ընկերութիւն հիմնելու միտք կամ փոխադարձ օգնութեան ընկերութիւն, կարելոյն չափ գործունէութեան ընդարձակ հիմունքներով:

Սորա կանոնադրութեամբ առտելի անդամ կարող են լինել ոչ միայն երկաթուղու վերայ ծառայող արիեստաւորները, այլ եւ առհասարակ Թիֆլիսի բոլոր արիեստաւորները:

Ահա բարի օրինակ մեր միւս քաղաքների եւ գաւառների համար, եթէ միայն գտնուին մարդիկ, որոնք կ՝ուզողանան լինել ընդհանուր ցանկութեան արտայայտող, օգնեն կազմելու կանոնադրութիւն, որ առանձին դժուարութիւն չի պատճառում, որովհետեւ Ռուսաստանի ներքին նահանգների բազմաթիւ քաղաքներում արդէն վաղուց այդպիսի արիեստաւորաց ընկերութիւններ կան, եւ մեծ յաջողութեամբ գործում են:

Այսպէս օրինակ Կիեւում գործում է «բանուորների փոխադարձ օգնութեան առտելը»:

Կիեւի առտելի նպատակն է. 1) տալ իւր անդամներին կարողութիւն առողջարար ու յարմար բնակարաններ ունենալու. 2) օգնել առտելի անդամներին եւ նոցա ընտանիքներին դժբախտութեան, հիւանդութեան, հաշմանդամութեան, մահուան, հրդեհի եւ այլ այսպիսի դժբախտ դէպքերում փողով՝ վերադարձնելու կամ չվերադարձնելու պայմանով:

Առտելները. հաստատուած կանոնադրութեան համաձայն, իրաւունք ունին տներ շինելու իրանց միջոցներով, եթէ ընդհանուր ժողովը աւելի շահաւէտ համարի այդ:

Կարող են սարքել զրուցատարութիւններ, ընթեր-

ցումներ, ժողովներ, որոնց նպատակն է զուարճացնել, կառավարութեան որոշմամբ հիմնել ուսումնարաններ արհեստաւորների տղոց համար եւ հասակաւորների համար էլ դասախօսութիւններ կազմել այն առարկաների ու գիտութիւնների մասին, որոնք կարող են արտելի անդամներին օգտակար լինել:

Կիեւի արտելին կարող են մասնակցել բոլոր արհեստաւորներն ու բանուորները, եւ նոյնպէս սոցա այրիներն ու ժառանգները:

Արտելի միջոցներն են միանուագ եւ ամսական վճարներ:

Տամպովի արհեստաւորների փոխադարձ ընկերութեան նպատակը սրանից շատ քիչ բանով է զանազանվում:

Այստեղ նմանապէս առաջին տեղը բռնում է կարօտեալ անդամներին օգնելը՝ զանազան տեսակ նպաստներ տալով ու անգործ անդամների համար աշխատանք գտնելով:

Ցեռոյ ընկերութիւնն առհասարակ աշխատում է, որ անդամակիցների կենցաղավարութիւնը բարւոքուի՝ հիմնելով հիւանդանոցներ, գրադարաններ, ապաստանարաններ եւ այլն:

Հիւանդութեան դէպքում, երբ իսկական անդամը անկարող է լինում իւր արհեստանոցը նայել, տալիս են նրան մէկ արհեստաւոր կամ բանուոր, որ հսկում է արհեստանոցի կանոնաւոր արտադրութեան վերայ, եւ գործն առաջ տանելու համար փող են տալիս այն պայմանով, որ ընկերութեան ծախսած փողը վերադարձնէ, բայց առանց տոկոսի:

Այս բոլոր համարհեստաւորաց ընկերութիւնները միայն մի ցանկութիւն ունին՝ ապահովել իրանց անդամների ծերութիւնը եւ ժամանակաւոր ապիկարութիւնը, եւ նրանց աննախանձելի դրութիւնը փոքր

ի շատէ բարձրել:

Այս միտքը նոր չէ, հարկաւոր է միայն կառավարութեան հաստատած կանոնադրութիւնը յարմարեցնել տեղական պայմաններին, եւ մեր քաղաքների հարիւրաւոր արհեստաւորները սրտանց շնորհակալ կը լինէին այսպիսի ընկերութիւն հաստատելու նախաձեռնողին:

Նորերս Պետերբուրգում արհեստաւորների համաժողով էր. դժբախտաբար, եթէ չեմ սխալվում, մեր արհեստաւորներից ոչ ոք չկար. համաժողովում շատ խրատական ու օգտակար բաներ կային եւ ոչ-արհեստաւորների համար:

Թոյլ ենք տալիս առաջ բերելու ճառախօսներից մէկի խօսքերը. «արհեստաւորների մէջ փոխադարձ ընկերութիւն կազմելու մասին»:

«Այս համաժողովի ջանքերն ուղղուած են արհեստաւորների ուժերը զօրացնելու, որ գործարանական արդիւնաբերութեան հետ կռուին:

Ներկայումս երբ Ռուսաստանի արդիւնաբերական ձեռնարկութիւնների մէջ խոշոր դրամագլուխներ են գործադրվում, երբ ամէն տեղ աւելի ու աւելի տարածվում է գործարանների խիտ ցանցը հազարաւոր բանուորներով, արհեստաւորի առանձնացած դրութիւնը, որ թոյլ ուժերով պաշտպանում է ինքնուրոյն գոյութեան իրաւունքները, աւելի դժուարանում է:

Մի քանիսը կարծում են, որ գործարանը պէտք է կուլ տայ արհեստաւորին, եւ թէ դրա դէմ չպէտք է կռուել. բայց դժուար թէ կարելի լինի այդ միտքը ընդունել:

Տէրութեան նպատակը պէտք է լինի, որ բախտաւոր մարդոց թիւն աւելի շատ լինի:

Բայց միթէ աշխատանքի ազատութեան եւ իւր

վիճակը ինքնուրոյն տնօրինելու մէջ չէ՝ մարդուս անկախ գոյութեան ու երջանկութեան գրաւականը:

Այն իրողութիւնը, որ կառավարութիւնը արհեստաւորներին հրաւիրեց, որպէս զի նոցա կարիքները լսէ, եւ նոցա կեանքը բարելաւելու միջոցներ որոնէ, հաստատում է, թէ արհեստաւորների ապագայ գոյութեան իրաւունքը՝ իբրեւ հասարակական արդիւնաբերութեան ինքնուրոյն մասնակցողների, ճանաչուած է»:

Ժողովը սահմանեց մի քանի միջոցներ, որով հեշտանում է ապագային ամենակարող դրամագլխի հետ կռուել. պէտք է կազմել փոխատու ընկերութիւններ, արհեստաւորների շինած իրերի վաճառքը հեշտացնել եւ այլն:

Սակայն աշխատանքի սովորական պայմաններում օգնելը բաւական չէ. բացառիկ դէպքերումն էլ անհրաժեշտ է օգնել, երբ մարդ հիւանդանում է, գործից եւ կամ նոյն իսկ աշխատելու ընդունակութիւնից զրկվում է:

Անհրաժեշտ է ապահովել արհեստաւորին եւ նոյն իսկ ծերութեան ժամանակ, եւ նորա ընտանիքին օգնել՝ եթէ կերակրողը մեռած է:

Հիշդ է՝ գործող կանոնադրութիւնն արհեստաւոր դասակարգին պարտաւորեցնում է իւր հիւանդ, աղքատ անդամներին օգնել եւ նոյն իսկ նոցա այրիներին ու որբերին,—բայց այդ օգնութիւնը բարեգործական ու ժամանակաւոր բնաւորութիւն ունի հիւանդի համար. բժիշկ կանչել, դեղերի համար փող տալ, փողով նպաստել, մինչեւ որ հիւանդն առողջանայ, եւ կամ գործը կարգի ընկնի, նշանակել բանուոր կամ աշկերտ հիւանդ արհեստաւորի փոխանակ ապսպրանքներ կատարելու համար, ձրի թաղել աղքատ արհեստաւորին, խնամարկիչ նշանակել այրիի ու

մանր երեխաների վերայ, կամ հաւատարիմ բանուոր վճարելով նորան ռոճիկ որբերի ու այրիների համար եղած փողից, սովորեցնել արհեստ արհեստաւորի մանր երեխաներին, հիմնել եւ պահպանել անկելանոցներ ծեր արհեստաւորների համար, հիմնել հիւանդանոցներ եւ այլն:

Բարեգործական օգնութիւնը բաւարար չէ, որովհետեւ արհեստաւորները նրանով կարող են օգտուել միայն այն ժամանակ, երբ սաստիկ կարօտութեան ու անկման մէջ են:

Բայց այդ օգնութիւնն էլ վեր ի վերոյ (պալլիատիւ) է:

Աւելի մեծ նշանակութիւն ունին այն միջոցները, որոնցով կարելի կը լինի բարեգործութեան դիմելու կարեւորութեան առաջն առնել:

Գիտութիւնն ու կեանքը ցոյց են տալիս, որ ամենալաւ միջոցը ինքնօգնութիւնն է, եւ փոխադարձ օգնութիւնը՝ իւր բոլոր ձեւերով:

Այսպէս են փոխադարձ օգնութեան, խնայողական արկղի, թաղման, փոխադարձ ապահովագրութեան եւ այլ ընկերութիւնները. այդպիսի ընկերութեան օգնութիւնը ստոր ողորմութիւն չէ, այլ ինքնօգնութիւն՝ խնայողութեան միջոցով, որ այն ժամանակ է տրվում, երբ կարելի է:

Ժամանակին տրուած նպաստով արհեստաւորը կարող է անգործութեան ծանր բոպէներին ապրել, անակնկալ դժբախտ դէպքերին դիմանալ, եւ իւր գործերը կարգի ձգել. նա կազատուի վաշխառուների, բանկի օգնութեան դիմելու կարիքից, եւ միանգամայն սնանկ դառնալուց:

Այսպիսի ընկերութիւններ՝ որ արդէն Լեհաստանում ու Ֆինլանդիայում գոյութիւն ունին, նշանաւոր չափով կը թեթեւացնէին արհեստաւորական վարչու-

թիւնների հոգսը՝ աղքատ արհեստաւորներ ինամելու նկատմամբ, որովհետեւ կարօտների թիւը կը նուազի:

Մի քանի արհեստաւորաց ընկերութիւնների հաւաքած գումարները՝ որոնք բարեգործութեան համար աւելորդ են եղել, կարող էին ծախսուել ուրիշ գործերի վերայ, օրինակ՝ արհեստաւորների շինած իրերի մշտական ցուցահանդէս կազմել, արհեստագիտական ուսումնարաններ, արհեստի վերաբերեալ գործիքների պահեստ հաստատել՝ բերելտալով անմիջապէս արտադրողներից ու փոխ տալով արհեստաւորներին ձեռնտու պայմաններով, հիմնել արհեստաւորական բանկ իւր բաժանմունքներով Ռուսաստանի զանազան տեղերում:

Այս խնդիրների իրագործումը կատարելապէս համապատասխանում է կառավարութեան նպատակներին:

Ահա կարճառօտ կերպով այդ ճառը:

Սրան կարելի է աւելացնել, թէ ոչ ոք կարող չէ արհեստաւորների գոյութեան իրաւունքը մերժել, բայց կարելի չէ մատնացոյց չանել եւ այն իրողութիւնը, որ նոցա թիւը շարունակ պակասում է:

Ի դէպ՝ մի քանի խօսք ասենք անչափահաս արհեստաւորների առողջութեան ու բարոյականութեան մասին:

Մեր արհեստաւորների մեծ մասի մտաւոր ու բարոյական միջակ կրթութեան պատճառով՝ արհեստաւորի անչափահաս աշկերտի վիճակն էլ շատ ցաւալի է:

Վարպետները իրանց շահի համար շատ անգամ կոպիտ կերպով շահագործում են իրանց ձեռքն ընկած երեխաներին:

Նրանց չեն սովորեցնում, այլ գործ են ածում իբր ծառայ տնային աշխատանքներ կատարելու եւ մի տեղ ուղարկելու համար:

Ներկայումս տիրող կարգերի շնորհիւ՝ անչափահաս արհեստաւորների մեծ մասը ապագային «պրոլետարիատ» պիտի լինի:

Եւ բժշկական—առողջապահական տեսակէտով էլ անչափահաս արհեստաւորների ներկայ դրութիւնը պէտք է շատ անբաւարար համարուի:

Երեխաներին կանուխ արհեստանոց տալը, նոցա ուժերին անհամապատասխան ծանր աշխատանքը, վատ սնունդը, աշխատելու եւ հանգստեան սենեակների առողջապահական վատթար վիճակը, վատ վարմունքը, հարբեցողը բանուորների վնասակար ու քայքայիչ ազդեցութիւնը՝ այս բոլորը խախտում են նրանց առողջութիւնը եւ երեխայի հոգին այլանդակում են:

Այդ պատճառով՝ անչափահաս արհեստաւորների առողջութեան ու բարոյական կեանքի հսկողութեան մէջ հասարակութիւնը մեծ մասնակցութիւն պէտք է ունենայ:

Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ անչափահասների աշխատութեան ժամերը կրճատուին, եւ դառնան 6-8 ժամ:

Հարկաւոր է երեխայական զուարճութիւններ սարքել՝ վարպետ արհեստաւորների փողով, հարբեցողութեան դէմ կռուելու համար (ինչպէս եւ առաջն առնելու) մանուկ արհեստաւորներից ժուժկալասէր ընկերութիւններ կազմել Անգլիական «փրկութեան բանակի» նման:

Դարձեալ՝ ցանկալի է, որ մարմնական պատիժը, մեր դարի այդ անարգանքը, վերանայ:

Արհեստաւորների անբնական վիճակն է պատճառ, որ արհեստների զարգացումը շատ դանդաղ է առաջ գնում:

Ախալցխայի յայտնի ձեռագործ ոսկեղէն աշ-

խատանքներն աւելի մեծ գին կունենային եւ աւելի շատ կը տարածուէին, եթէ մեր արհեստաւորները փոքր ի շատէ նկարչութիւն ու գծագրութիւն գիտենային:

Ամէն բանի մէջ էլ գեղարուեստական կողմը մեծ նշանակութիւն ունի:

Ը.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՁՈՀԵՐ.

Անցեալ տարուայ Յունիս ամսից՝ երբ Լոնդոնի միջազգային համաժողովում քննվում էր պոռնկութեան հարցը, մինչեւ վերջին ժամանակներս թէ՝ մամուլը եւ թէ հասարակութիւնը շարունակ վերադառնում է հասարակական ներկայ կեանքի այդ ցաւալից խնդրին:

Ի՞նչ է պոռնկութիւնը:

Արդեօք մի անողոք կարի՞ք, որ առաջ է գալիս մարդու առանձին կազմութիւնից, թէ հետեւանք է ներկայ անկատար ու կեղծ կրթութեան, որ կարելի է ոչնչացնել, երբ երկու սեռի յարաբերութիւնների վերայ ա՛յլ հայեացք ունեցուի:

Այս բարդ հարցը՝ որ վաղուց զբաղեցնում է հոգեբաններին, բժիշկներին ու սոցիալական վերանորոգիչներին՝ ըստ երեւութին դարձեալ սպասում է իւր վճռին:

Նորերս Ռուսաց կառավարութիւնն արձագանգ տուեց այս կարեւոր խնդրին՝ բժշկական—ոստիկանա-

կան յանձնաժողովի ձեռքով այլ եւ այլ կարգադրութիւններ անելով. նոցանից առանձին ուշադրութեան արժանի է այն միջոցը՝ որ ուղղուած է այն սուտ ֆակտի դէմ, իբր թէ պոռնկանոցների աղջիկները իրանց տէրերին պարտք են լինում, որով եւ ստրկանում են:

Մնացած կէտերը—պոռնկանոցներում թունդ խմիչքներ ծախելու արգելքը, կրքեր շարժող նկարներ հեռացնելը եւ այլն, աչքի առաջ ունին միայն մասամբ մաքրելու այն ապականուած մթնոլորդը, որի մէջ «սիրոյ դժբախտ ստրկուհիներն» են ապրում:

Յանձնաժողովը հոգ է տանում եւ այն բանին՝ որ արգելէ անփորձ աղջիկներին անառակութեան զոհ լինել, եւ դիւրացնէ նոցա դարձը «դէպի բարեբարոյ կեանք»:

Համեմատելով այդ կարգադրութիւններն Լոնդոնի միջազգային կոնգրեսի վճիռների հետ (հաստատել, կարելւոյն չափ, բոլոր պետութիւնների մէջ էլ միատեսակ պատիժներ կանանց ու աղջիկներին անառակութեան դրդողների համար՝ կամ բռնաբարութեամբ, խաբէութեամբ, իշխանական սպառնալիքով եւ կամ ուրիշ միջոցներով) տեսնում ենք, որ երկու դէպքումն էլ պոռնկութեան դէմ մաքառումը ի նկատի ունի միայն առանձին անհատների պահպանումը. այն ինչ չարիքն իրապէս չի շոշափվում:

Ի հարկէ այս էլ մի բան է. այն տասնեակ կանայք, որոնց այսպիսով կարելի է պոռնկանոցներից խլել, արժանի են որպէս զի մոռածենք եւ հոգ տանենք նոցա փրկութեան մասին. բայց ո՜րքան աւելի օգտակար ու էական կը լինէր, եթէ քննուէր դրժբախտութեան իսկական պատճառը, եւ հոգ տարուէր նոյնը բնաջինջ անելու:

Ազատել առանձին պոռնիկներ նոյն է, թէ մէկը

աշխատում է ծովի ջուրը թէյի գդալով պարպել, կամ թէ ծովի ափում աւազի հատիկներ հաւաքել, որովհետեւ մինչդեռ մէկը փրկվում է, հասարակական պայմանները ստեղծում են միլիոնաւոր նոր պոռնիկներ:

Այդ պատճառով հասարակական բարեփոխիչները պէտք է իրանց կացինը մօտեցնեն ծառի արմատին եւ ոչ թէ առանձին ճիւղերին:

Պէտք է խոստովանել, որ հասարակական նախաձեռնութիւնն աւելի արմատական կերպով է հոգ տանում պոռնկութիւնն արմատախիլ անելու, ինչպէս եւ այն ընկերութիւններն՝ որոնք նորերս կազմուել են Պետերբուրգում այդ նպատակով, որոնց ծրագրի էական կէտն է՝ նախազգուշացումը, այսինքն՝ ետ են կացնում կանանց իրանց մարմինը ծախելու անարգ արհեստից:

Անցեալ ամառ հաստատուած «Մոսկվայի կանանց վիճակը բարւոքելու ընկերութիւնը», որպէս եւ նոր հիմնուած «կանանց պաշտպանելու Ռուսական ընկերութիւնը» մտադիր են աշխատանքով օգնելու այն կանանց ու օրիորդներին, որոնք վաստակի պէտք ունին:

Մենք կարծում ենք, որ հէնց այդ բանի մէջ է հարցի ծանրակշիռ կողմը:

Ի միջի այլոց սենատոր՝ Կոնին «կանանց պաշտպանելու» ընկերութեան առաջին ժողովում, իւր ճառի մէջ հաստատեց թէ ներկայումս ամբողջ Ռուսաստանում «դեղին տոմսակ» ունեցողներից միայն տասներկու տոկոսը հայր կամ մայր ունին, իսկ մնացածները զրկուել են ծնողներից վաղ հասակից, եւ պարապում են իրանց սարսափելի արհեստով կարիքի ու անմիխիթար բարոյական պայմանների ազդեցութեան տակ:

Հետաքրքիրն այն է, որ Ռուս պոռնիկների ութսուն եւ հինգ տոկոսը անգրագէտ է:

եւ այսպէս անտէր՝ մնացած օրիորդների նիւթական թշուառ դրութիւնը, տգիտութիւնն ու կատարեալ անօգնականութիւնն է պատճառ նոցա անկման, եւ ահա թէ ինչի դէմ պէտք է կռուեն հասարակական գործիչներն ու հիմնարկութիւնները, որոնք ուզում են պաշտպանել զգայութեան թշուառ զոհերին:

Բայց աշխատանքով օգնելու գործն էլ պէտք է արմատական ու նպատակայարմար լինի:

Աշխատանքով օգնելուց առաջ՝ անհրաժեշտ է իմանալ, թէ ի՞նչ աւելի ձեռնտու է աշխատանքի հրապարակում, եւ ինչո՞վ օգտակար է պարապել, որ կանայք վաստկին ո՛չ միայն մի կտոր չոր հացի եւ կամ խոնաւ անկիւնի փող, այլ եւ քիչ թէ շատ մարդավայել կեանք վարեն:

Հակառակ դէպքում բանուոր կինը կարող չէ բաւարար կերպով պաշտպանել իւր կէս-քաղցած դառն կեանքը՝ հասարակական զոհի՝ ըստ երեւութին ուրախ կեանքի հետ փոխելու հրապուրից:

Որպէս զի աշխատանքով օգնելը համապատասխան լինի այն նպատակին, ինչի համար որ ցանկալի է ընկերութիւն կազմել, անհրաժեշտ է քաղաքներում աշխատանքի դրութեան հիմնաւոր վիճակագրական քննութիւն անել (ինչ որ մեզանում բոլորովին չկայ), որ տեղ զօրաւոր են թէ աշխատանքի պահանջն ու առաջարկութիւնը, եւ թէ դատարկ ու անբարոյական կեանքի հրապոյրը:

Այդպիսի քննութիւններ արդէն վաղուց կատարվում են թէ Անգլիայում եւ թէ ուրիշ տեղերում հասարակութեան ու տէրութեան նախաձեռնութեամբ:

Ամէն տեղ այդ ճանապարհով յաջողուել է լոյս սփռել բանուոր կանանց դրութեան վերայ, եւ ցոյց տալ թէ աշխատանքի ի՞նչ նոր տեսակներ կարող է

գործ դնել բանուոր կինը, եւ ի՛նչ աշխատանքի մէջ ապարդիւն վատնում իւր առողջութիւնն ու ուժը:

Ունենալով ձեռքում թուերով հաստատուած փաստեր՝ հասարակութիւնը պէտք է կռուի պոռնկութեան դէմ այն պարզ ու հաստատուն գիտակցութեամբ, թէ ի՛նչ կարող է առաջարկել կարօտ կանանց, ինչպէս ապահովել խղճուկ ու անապաստան որբերին, որոնք, ինչպէս եւ ամէն մարդ, ուզում են իրանց ուզածի պէս կեանքից օգտուել:

Մենք կատարելապէս համոզուած ենք, թէ մի այսպիսի ազնիւ կոչի՝ հիմնել «ընկերութիւններ» եւ առհասարակ կանանց աշխատանքը, բանուորների դրութիւնն ու կենցաղը քննել, արձագանգ կը տան բազմաթիւ զարգացած կանայք, եւ իրանց ջանքերով խոշոր գանձ կը մտցնեն կանանց շարժման պատմութեան մէջ:

Ներկայումս՝ «կանանց պաշտպանելու Ռուսական ընկերութեան» յանձնաժողովը, որի նախագահն է ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆՈՒՀԻ ԵԼ. ԳԷՈՐԳԻԵՒՆԱՆ, արդէն հիմնել է բաժանմունքներ, որոնց գործն է հետեւեալը:

1) Երեւան հանել ու քննել այն օրիորդների ու կանանց դրութիւնը, որոնց հարկաւոր է պաշտպանել. 2) հիմնել պաշտպանող ապաստանարաններ եւ ընդհանուր սենեակներ. 3) ժամանակաւոր ապաստանարաններ այն պոռնիկների համար, որոնք պատուաւոր կեանք վարելու ձգտում են ցոյց տալիս. 4) հոգ տանել թէ մէկ եւ թէ միւս կանանց ապաստանարանից դուրս գալուց յետոյ վիճակը բարւոքել:

Ցոյս կայ, որ մօտիկ ապագայում կազմուի նաեւ կանանց իրաւաբանական օգնութիւն տալու բաժանմունք, որի պարտքը պիտի լինի հրապարակային դասախօսութիւններ կազմել եւ ընկերութեան նպա-

տակին պատշաճ գրքեր ու յօդուածներ հրատարակել:

Հին ու ահաւոր չարիքի դէմ մարտնչելու եւ նորա ծաւալման առաջն առնելու կարեւորութիւնը անշուշտ մեր հասարակութեան համակրութիւնն եւս կը գրաւէ:

Հերիք է որչափ քննեցինք. ժամանակ է զարթնելու. մեր շուրջը արդէն լոյս է. . . .

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱԶԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. *Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը* (*սպառ.*) 5 *կոպ.*
2. *Վարակիչ հիւանդութիւններ* (*սպառուած*) . 5 »
3. *Ի՞նչ է սիֆիլիսը* (*սպառուած*) . . . . . 5 »
4. *Առողջապահական զրոյցներ* (*սպառուած*) . . 5 »
5. *Ի՞նչ է ժուժկալութիւնը* (*սպառուած*) . . . 5 »
6. *Ի՞նչ է անառակութիւնը* (*սպառուած*) . . . 5 »
7. *Վեներական ախտեր* (*սպառուած*) . . . . . 5 »
8. *Աչակերտի առողջապահութիւն* (*սպառուած*) . 2 »
9. *Մեր նեարդները* (*սպառուած*) . , ... 10 »
10. *Սիֆիլիս* (*բարեփոխուած*) (*սպառուած*) . . 10 »

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1. *Ո՞վ է յանցաւորը*	*Տպուած են*	15 *կոպ.*
2. *Կարիք և բարեգործութիւն*		15 »
3. *Առողջ հոգին առողջ մարմնի մէջ*		10 »
4. *Գեղձախտ* (*զօլոտուխտ*)		10 »
5. *Նուէր նորատի կանանց*		15 »
6. *Դաստիարակչական զրոյցներ*		15 »

Այս վեց գրքերի վաճառումից գոյացած արդիւնքը ամբողջովին յատկացվում է ասպատային Ախալցխայում հիմնուելիք աշխատանոցի օգտին։ Սառնայ ցանկացողները կարող են դիմել հեռևեալ հասցէով՝ ուեյացնելով իւրաքանչիւր գրքուկի գնին իրրև ճանապարհածախս ԵՐԵՔ կոպ.։

С.-Петербургъ, Владимірскій 3, кв. 8, Д-ру А. Кечегьяну.

ԳԻՆՆ Է **15** ԿՈՊ.